

ՀԱԼԵՊԱՆՅՈՒԹԻՒՆԸ ԱՏՐՊԵՅՃԱՆԱԹՐՔԱԿԱՆ ՅԱՐՁԱԿՈՒՄՆԵՐԸ ԵՒ ՄԱՐԿԱՊԱՆՈՒԹԻՒՆԸ ԴԱՏԱՊԱՐՏԵՅՑ ԺՈՂՎՐԴԱՅԻՆ ՀԱԿԱՔՈՎ



Կազմակերպությամբ Զրիստափոր Ուսանողական Միության, Հայ Դատի Յանձնախումբին և Սուրիոյ Երիտասարդաց Միության, Կիրակի, 25 Հոկտեմբեր 2020-ին տեղի ունեցաւ ցոյց եւ ժողովրդային հաւաք՝ ի գորակցութիւն Արցախի եւ ընդդէմ Թուրքիոյ եւ Ատրպէյճանի ոտնձգութիւններուն:

Հալէպի Ազիզի շրջանը թնդաց հայ երիտասարդներու բողոքի կանչերով, «Արցախը Հայաստան է», «Վերջ Յեղասպանութեան», «Յաղթելու ենք» լոզունքներով: Հազարաւոր հայ երիտասարդներ,

Վեհան Պարսումեան
 Շար.՝ էջ 12 >

ՃԱՏՖԱՐԻ. «ԹՇՆԱՄԻՆ ԶԻ ԿՐՆԱՐ ԴԱՏԱԻՐ ԸԼԼԱՆ»

ՄԱԿ-ի մօտ Սուրիոյ մնայուն ներկայացուցիչ Պաշար ալ Ճաաֆարի ՄԱԿ-ի առջանց ժողովին յայտնեց, որ թրքական իշխանութիւնները կը շարունակեն բռնագրաւել Սուրիոյ հիւսիսային շրջանէն տարածքներ եւ թալանել Սուրիոյ ժողովուրդին պատկանող երկրին հարստութիւնները ու բռնի թրքացման քաղաքականութիւն վարել, որոնց կողքին շրջանի ժողովրդագրական պատկերը փոխել եւ բնիկ ժողովուրդը տեղահան ընել: Ապա շեշտեց, որ Թուրքիոյ այս նենգ քաղաքականութիւնը սուրիական հողերուն իրաւական տուեալներն ոչ մէկ բան պիտի փոխէ, ոչ ալ Սուրիոյ ինքնիշխանութեան իրաւունքին պիտի կարենայ սպառնալ: Ճաաֆարի աւելցուց, որ Էրտողանի վարչակարգը ընդարձակեց իր ահաբեկչական գործողութիւններն ու զինուորական յարձակումները Սուրիայէն Իրաք, Լիպիա, Թունուզ, Եգիպտոս, Կիպրոս, Ատրպէյճան եւ Հայաստան, հաւանաբար ալ կրկին թակելու Վիեննայի դռները: Ապա աւելցուց որ այս երեւոյթը արդիւնք է նաեւ ՆԱԹՕ-ի անտարբերութեան եւ ինչպէս Իսրայէլի այնպէս ալ Թուրքիոյ գորակցելուն:



Ճաաֆարի դիտել տուաւ, որ Սուրիան քակիցս զգուշացուցած էր ՄԱԿ-ը
 Շար.՝ էջ 2 >

ԱՏՐՊԵՅՃԱՆԻ ԶԻՆԵԱԼ ՈՒԺԵՐԸ ՈՄԲԱԿՈՇԵՅԻՆ ԱՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ԾՆԵՂԱՏՈՒՆԸ

28 Հոկտեմբերին, Արցախի Արտաքին Գործոց Նախարարութիւնը լուսանկարներ հրապարակեց Ատրպէյճանի գինեալ ուժերուն կողմէ նոյն



օրը ռմբակոծուած Ստեփանակերտի ծննդատունէն: Լուսանկարները հրապարակուեցան գերատեսչութեան «Թելեկրամ»-ի ալիքով:

Արցախի Մարդու իրաւունքներու պաշտպան Արտակ Պեգլարեան յայտնեց, որ Ստեփանակերտի ու Շուշիի քաղաքացիական շրջաններուն թիրախաւորման հետեւանքով կան մեծ թիւով տուժածներ:

Այս յանցագործութեան մասին Հայաստանի Հանրապետութեան Արտաքին Գործոց Նախարարութիւնը հանդէս եկաւ հաղորդագրութեամբ (տես.՝ էջ 3):

Խմբագրական

ԱՐԱԲԱԿԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՐԾԻՔԸ՝ Ի ՏԵՍ ԹՈՒՐԲ-ԱՉԵՐԻԱԿԱՆ ՈՏՆՁԳՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ

Թուրքիոյ աւելի քան դար մը առաջ որդեգրած ու ներկայիս շարունակուող յանցագործութիւններուն անպատժելի մնալը պատճառ կը դառնայ, որ ան աւելի անկարգութեամբ մոլուցքով դիմէ ոճրային, ահաբեկչական շարժումներու ծաւալման նպատակով քայլերու, հասնելու համար թուրքական իր նպատակներուն:

Նախքան սուրիական տագնապը, արաբական աշխարհին մէջ որոշակի համակարանը կար թուրքիոյ ներկայ նախագահին՝ Էրտողանի նկատմամբ, որպէս Միջին Արեւելքի ու յատկապէս արաբ ժողովուրդի դատին պաշտպան ղեկավար: Այս ալ ունէր իր պատճառները անշուշտ: Էրտողանի արաբական աշխարհին մօտենալու, պաղեստինեան դատին նեցուկ կանգնելու կեղծ փորձերն էին, որոնք պահ մը այն տպաւորութիւնը թողուցին, որ ան Միջին Արեւելք կ'ուղղուի փրկելու Պաղեստինն ու Միջին Արեւելքի ժողովուրդներուն հետ դրական յարաբերութիւններ մշակելով իշխող դեմք դառնալու:

Այս խաբկանքը, սակայն, շուտով փարատեցաւ, երբ Թուրքիան սուրիական տագնապը հրահրելով ահաբեկչական շարժման թիրախ դարձուց Սուրիան, հրահրեց հաւատարմութեան ծայրայեղներն ու կրօնքի եւ դաւանանքի պատրուակով լարեց զանոնք իրենց իսկ երկրին դէմ, ապա նաեւ իր տարածաշրջանային ծրագիրներուն համար օգտագործեց ահաբեկիչները այլ երկիրներու մէջ՝ թէ՛ իր երկրի սահմաններէն հեռացնելու, անվերադարձ մահուան գիրք ճամբելով գիրենք, եւ թէ՛ իր ծաւալապաշտական ծրագիրներուն ծառայեցնելով այդպիսի վարձկաններ:

Սուրիայէն, Իրաք, Լիպիա, ներկայիս հարաւային Կովկաս, Արցախ ահաբեկչական շարժումներուն տարածման պատասխանատուն մէկ գլխաւոր կողմ է՝ Թուրքիան:

Արաբական աշխարհը ի տես այս գարգացումներուն հիմնովին շրջեց իր մօտեցումները եւ ճանչցաւ ինքզինք բարեկամ ներկայացնել փորձող Թուրքիոյ ներկայ նախագահին իսկական դիմագիծը:

Այսօր արաբական շարք մը երկիրներ Թուրքիոյ հետ կը վերաբերին որպէս թշնամի երկիր: Վերջերս ծայր առած է Թուրքիան տնտեսապէս ճնշելու ծրագիր մը, որուն համաձայն, ժողովրդային ոչ-պետական մակարդակներով արաբական զանազան երկիրներու մէջ թրքական արտադրութիւններու վաճառքը արգիլելու կոչեր կը հնչեն, որոնց բնականաբար կը յաջորդէ թրքական ներդրումային ծրագիրներու մերժումը:

Սուրիա, Լիբանան, Լիպիա, Սեւտական Արաբիա եւ տակաւին շարք մը այլ արաբական երկիրներու մէջ թրքական արտադրութիւնները կը մերժուին:

Ժողովուրդներ տեսնելով միջազգային հանրութեան լռութիւնը, իրենք կը նախաձեռնեն տնտեսական պատիժներու նախնական քայլերու, որոնք տարբեր երկիրներու միջեւ համադրման պարագային կրնան լուրջ ճնշում բանեցնել Թուրքիոյ արդէն իսկ խարխուլ տնտեսութեան վրայ:

Այս արշաւը կը հասնի նաեւ Եւրոպա: Օրերս Ֆրանսայի մէջ եւս ստեղծուած է թրքական արտադրութիւնները մերժելու շարժում մը:

Այս բոլորին կողքին, արաբական աշխարհի քաղաքական բեմերուն վրայ նկատելի է թրքական ոտնձգութիւնները մերկացնելու յստակ քաղաքականութիւն:

Այս գարգացումները աննկատ պէտք չէ անցնին հայկական դիւանագիտական աշխատանքներու շրջածիրէն: Թուրքիան ահաբեկչութիւն արտածող երկրի վերածուած է փաստօրէն: Ատրպէյճանը այս ծրագրին սատարող գործիք մըն է իրեն համար պարզապէս, որուն սեփական շահերը չեն հետաքրքրէր Թուրքիան, որքան իր թուրքական ծրագիրները:

Արցախի սամաը ահաբեկչական խումբեր տեղադրող Թուրքիոյ համար սա սկիզբ է միայն: Անոր հեռահար նպատակը Իրան-Յայաստան սահմանը ահաբեկչական թիրախի վերածել է ետք իւսիսային Կովկաս հասնիլ է:

Սուրիական իշխանութիւններ քանիցս զգուշացուցած էին ՄԱԿն ու միջազգային ընտանիքը ահաբեկիչներու հոսքը ղեկավարող Թուրքիոյ նկրտումներէն, սակայն Իսրայելի շաղագին շուր լեցնող արեւմտեան երկիրներ լուռ մնացին այս ահազանգին դիմաց, անլրջութեամբ մօտեցան Թուրքիան պատժելու ինչպէս հայ ժողովուրդին, այնպէս ալ արաբական շարք մը երկիրներու կոչերուն... արդիւնքը այսօր Միջին Արեւելքէն հարաւային Կովկաս, ապա նաեւ իւսիսային Կովկաս, Եւրոպաներ ահաբեկչական շարժումներու տարածումն է:

Այս անտարբերութիւնն է Թուրքիոյ յանցագործութիւնները սնուցանող հիմնական գործօնը:

Այսօր Արցախի հայ զինուորը կը պայքարի ոչ միայն իր հողերու բռնագրավման եւ իր ժողովուրդը երկրորդ ցեղասպանութեան ենթարկելու ճգտող ուժերու դէմ, այլեւ ահաբեկչական ծաւալող, իսկալ շարժումի մը դէմ: Կը պայքարի առանձին, կը պայքարի նաեւ աշխարհին համար:

Այսօր, Ստեփանակերտի ծննդատան եւ Շուշիի Ղազակեցոց ելեղեցւոյ դիտարկելու հրթիռակոծումը յստակօրէն կը սահմանեն պատերազմական յանցագործները:

Այս յանցագործները նոյն ահաբեկչական ոճը որդեգրած էին Սուրիոյ մէջ, Լիպիոյ մէջ, Իրաքի մէջ, այսօր Արցախի մէջ, իսկ անոնց մոլուցքը չսանձուելու պարագային՝ այլ տարածաշրջաններու մէջ:

Միջազգային ընտանիքը, իր հարցերով տարուած, ցարդ կը թերագնահատէ ահաբեկչական վտանգի այս տարողութիւնը:

«Գ.»

-Ուրբաթ, 23 Հոկտեմբեր 2020-ին, ՍԱՆԱ հաղորդեց, որ Սուրիոյ նախագահ Պաշշար ալ Ասատ ընդունեց Փաքիստանի Իսլամական Հանրապետութեան Սուրիոյ մէջ նորանշանակ դեսպան Սաաիտ Մուհամմետ Խանի հաւատարմագիրը եւ Օմանի Իշխանութեան Սուրիոյ մէջ նորանշանակ դեսպան Թուրքի ալ Պորսաաիտի հաւատարմագիրը:



Ասատ զոյգ հաղորդումներ ունեցաւ դեսպաններուն հետ, շնորհաւորեց զիրենք նոր պաշտօններուն համար եւ յաջողութիւն մաղթեց:

Հանդիպումներուն ներկայ էին Սուրիոյ արտաքին գործոց նախարար Ուալիտ Մուալլեմ եւ Սուրիոյ նախագահութեան պետական նախարար Մանսուր Ազգամ:

-Սուրիոյ Զարիւղի նախարարութենէն պատասխանատու մը յայտնեց, որ բնակարաններու օգտագործման կազմի ապահովումը աստիճանաբար կը բարելաւուի, իսկ կազմի արտադրութեան քանակը բարձրացած է համեմատաբար նախորդ տարուան: Օրական շուրջ 100.000 տակար կ'ապահովուի, սակայն երկրին բնակարանային կազմի պահանջը օրական 120.000 տակար է:



Ան յայտնեց, որ նախորդ տարի Պակիստանի գտարանի դադրելուն պատճառով ժողովուրդին կազմի մատակարարումը կ'ուշանար, սակայն գտարանի վերանորոգումէն ետք կազմի արտադրութիւնը բարձրացած է, հետեւաբար մարդիկ կարճ ժամանակամիջոցին հերթաբար կը ստանան իրենց անհրաժեշտ կազմ եւ կազմի տագնապը աստիճանաբար կը վերանայ:

-Բանուորներու արհմիութեան կեդրոնական խորհուրդի անդամները հանդիպում ունեցան Սուրիոյ կառավարական խմբակին հետ, ներկայութեամբ Սուրիոյ վարչապետ Հուսեյն Արնուսի, առողջապահութեան նախարար Հասան Ղապպաշի, ընկերային ծառայութիւններու նախարար Սալուա Ապտալլայի, ներքին առեւտուրի նախարար Թալալ Պարագիի, արդիւնաբերութեան նախարար Չիատ Սապպադի, ելեկտրականութեան նախարար Ղասսան Չամելի, ֆինանսներու նախարար Զինան Եադիի եւ փոխարհամիջոցներու նախարար Չուհեյր Խուզեմի:



Արնուս շեշտեց, որ կառավարութիւնը շատ զոհ է ներկայ իրավիճակէն, սակայն ստիպուած է այս միջոցին դիմելու ներկայ պայմաններուն լոյսին տակ: Ան յայտնեց, որ ազգային հարստութեան 80%-ը ներկայիս գինեալ ահաբեկչական խմբաւորումներուն հսկողութեան տակ կը գտնուի, անոնք վերջերս շարունակեցին իրենց ոճիրները եւ Սուրիոյ ծովեզերային զանազան շրջաններ հրդեհի մատնեցին:

ՃԱՏՖԱՐԻ «ԹՇՆԱՄԻՆ...»

Սկիզբ՝ էջ 1

Էրտողանի միջազգային օրէնքներն ու ՄԱԿ-ի կանոնադրութիւնը արհամարհող ընթացքէն, աւելցնելով որ Թուրքիան ոչ մէկ ձեւով յարգեց Սոչիի համաձայնութիւնը, պարզ այն պատճառով որ թշնամին դատաւոր չի կրնար ըլլալ եւ հրդեհներ բռնկեցնողը հրշեջի դերին մէջ չի կրնար մտնել:

Ճաաֆարի դատապարտեց Սուրիոյ ժողովուրդին պարտադրուած տնտեսական միակողմանի պատիժները, նկատել տալով որ այս քայլը եւս ահաբեկչական դրսեւորում է պատերազմէն տակաւ դուրս եկող Սուրիոյ ժողովուրդին նկատմամբ:

Լուրեր Հայաշխարհին

ՀՀ ԱԳՆ. «ԱՐՃԱՆԻ ՄԷՋ ԿԵԱՆՔԸ ՄՊԱՆԵԼՈՒ ԱՏՐՊԷՅՃԱՆԻ ՈՒՉՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՂԵԿՎԱՐՈՒԹԵԱՆ ՓՈՐՁԵՐԸ ԴԻՏԻ ՉԱՆՈՂԻՆ»

ՀՀ Արտաքին գործոց նախարարության յայտարարությունը Ատրպեյճանի կողմէ Արցախի Հանրապետության մայրաքաղաք Ստեփանակերտի եւ Շուշի քաղաքի հրթիռակոծման մասին.



«Հոկտեմբերի 28-ին Ատրպեյճանի զինուած ուժերն օրուայ ընթացքում բազմաթիւ անգամ ռմբահարել եւ հրթիռակոծել են Արցախի Հանրապետության մայրաքաղաք Ստեփանակերտը եւ մեծութեամբ երկրորդ քաղաք Շուշին: Հարուածներ են հասցուել քաղաքի բնակելի թաղամասերին եւ քաղաքացիական ենթակառուցուածքներին, այդ թւում՝ Ստեփանակերտի ծննդատանը: Խաղաղ բնակչութեան շրջանում կան զոհեր եւ վիրաւորներ:

Այս պատերազմական յանցագործութիւնը, որը միջազգային մարդասիրական իրաւունքի եւ սովորութային իրաւունքի կոպիտ խախտում է, յստակօրէն ցոյց է տալիս, որ Արցախում Ատրպեյճանի թիրախը ժողովուրդն է՝ նորածիններ, մայրեր, տարեցներ: Արցախում կեանքը սպանելու Ատրպեյճանի ռազմաքաղաքական ղեկավարութեան փորձերը ձախողուելու են, իսկ դրանց կազմակերպիչները ենթարկուելու են պատասխանատուութեան»:

ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱԴԻ ԱՆԿԱՆՈՒԹԵԱՆ ՃԱՆԱԳՈՒՄԸ ԿԱՐԵԽՐ ԲԱՅԼ ԴԻՏԻ ԸԼԱՅ ԱՅՍ ԴԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՆՐՁԱՆԻՆ

Ամէն օր կը խախտուին մարդու իրաւունքները, խախտուած է հրադադարի մասին ձեռք բերուած համաձայնութիւնը: Այս արձանագրած են Ֆրանսայէն Հայաստան ժամանած պատգամաւորները, որոնք Երեւանի մէջ հանդիպում ունեցած են ՀՀ Բիւրոյի ներկայացուցիչ Յակոբ Տեր Խաչատուրեանի հետ:



Անոնք ստեղծուած իրավիճակէն ելքը կը տեսնեն Արցախի անկախութեան ճանաչումը, որ ըստ անոնց, թոյլ պիտի տայ որոշակի բանակցութիւններ սկսելու եւ կառուցելու Արցախի ապագան:

Պատուիրակութիւնը հաստատած է, որ միջազգային հանրութիւնը կոյր կը ձեւանայ, այդպիսով օգնելով ատրպեյճանա-թրքական միութեան:

ՀՀ Բիւրոյի ներկայացուցիչ Յակոբ Տեր Խաչատուրեան կարեւոր նկատած է այս օրերուն Հայաստանի հանդէպ Ֆրանսայի բարեկամական վերաբերմունքը եւ յոյս յայտնած է, որ անկախ պիտի նպաստէ Արցախի անկախութեան ճանաչման:

ԱՌԱՋՆՈՐԴ...

Սկիզբ՝ Էջ 4

Առաջնորդ Սրբազան Հայրը տեսչարանին մէջ, վարժարանի պետական քննիչուհի տիկ. Մուսա Սուլթանի հետ ունեցաւ կարճ հանդիպում մը, որուն ընթացքին քննարկուեցան դասաւանդական արդի միջոցներու եւ առցանց ուսուցման իրագործման հետ առնչուած խնդիրներ:

Մանկապարտէզի եւ նախակրթարանի դասարաններ այցելելով Սրբազան հայրը հետեւեցաւ դասաւանդական աշխատանքին, մտերմաբար գրուցեց մանուկներուն հետ եւ մեծ գոհունակութեամբ լսեց անոնց ընթերցումներն ու արտասանութիւնները:

Այցելութեան աւարտին հայրական օրհնութեան միացնելով վարժարանի բարեկարգման եւ դասաւանդական որակի բարձրացման ուղղուած թելադրանքներ, մօտիկ ապագային կրկին այցելելու խոստումով Սրբազան Հայրը հրաժեշտ տուաւ:

ԱՏՐՊԷՅՃԱՆ ԵՐՐՈՐԴ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՀՐԵՊՈՒՄՐԱՆ ԱՂ ԽՍԵՆՏԵՑ

Խախտելով Միացեալ Նահանգներու մէջ 26 Հոկտեմբերին ճշդուած մարդասիրական հրադադարի մասին համաձայնութիւնը՝ Ատրպեյճան 26 Հոկտեմբերի ամբողջ օրուան ընթացքին շարունակեց յարձակումները տարբեր ուղղութիւններով, ինչպէս նաեւ ռմբակոծեց Արցախի Հանրապետութեան քաղաքացիական բնակավայրերը:

Ըստ Հայաստանի Պաշտպանութեան նախարարութեան ներկայացուցիչ Արծրուն Յովհաննիսեանի, Արցախի նկատմամբ Ատրպեյճանի սանձազերծած պատերազմը շարունակուած է 25 Հոկտեմբերին, երբ Ատրպեյճան փորձած է, սակայն չէ յաջողած ճեղքել ռազմաճակատը:



26 Հոկտեմբերի առաւօտեան ատրպեյճանական զինուած ուժերը, որոնց միացած են ահաբեկչական տարբեր կազմակերպութիւններ, ինչպէս նաեւ այլ պետութիւններու զինուած ուժերու ստորաբաժանումներ, հարաւարեւելեան ուղղութեամբ լայնածաւալ յարձակման ձեռնարկեցին քանի մը ուղղութիւններով՝ միաժամանակ հրետակոծելով եւ ռմբակոծելով Արցախի քաղաքները:

Յովհաննիսեան դիտել տուաւ, որ հայկական զինուորական ղեկավարութիւնը փայլուն կերպով կը տիրապետէ իրավիճակին, նոյնիսկ եթէ երբեմն ստիպուած կ'ըլլայ նահանջել ու որոշ դիրքեր զիջիլ՝ շատ յաճախ գերակայող ուժերու ազդեցութեան տակ, բայց մեր հրամանատարական միտքի փայլուն ծրագիրին շնորհիւ կացութիւնը հակակշիռի տակ կ'առնուի: Յովհաննիսեան աւելցուց, որ թշնամիին կողմը 8-12 անգամ աւելի ուժեր կանգնած են մեր զօրքերուն դիմաց:

Արծրուն Յովհաննիսեան դիտել տուաւ, որ ատրպեյճանական բանակը 25 Հոկտեմբերի երեկոյեան կրցած է գրաւել Կուբաթլուն եւ մօտեցած Սիւնիքի դարպասներուն, բայց իրավիճակը ծանր չէ:

Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեան 26 Հոկտեմբերին յայտարարեց, որ ինք կ'անկալէ, որ Միացեալ Նահանգները արձագանգեն Ատրպեյճանի կողմէ հրադադարի խախտման՝ մատնանշելով, թէ որո՞ւ գործողութիւններուն հետեւանքն է հրադադարի խախտումը եւ անկալ ինչ հետեւանքներ պիտի ունենայ հրադադարը խախտողին համար:

Դիմատետրի իր էջէն կատարած յայտարարութեան ընթացքին վարչապետ Փաշինեան յայտնեց, որ հարցուցած է Փոմփեյնին, թէ ինչպէ՞ս պիտի յստակացնեն, թէ ո՞վ խախտած է հրադադարը եւ ինչ հետեւանքներ պիտի արձանագրուին զայն խախտողին հաշուոյն:

Վարչապետ Փաշինեանի համաձայն, յոյս կայ, որ ԵԱՀԿ Մինսքի խմբակի երեք համանախագահ երկիրներու՝ Ռուսիոյ, Միացեալ Նահանգներու եւ Ֆրանսայի նախագահներուն ջանքերը արդիւնաւորուին՝ աւելցնելով, որ Ատրպեյճան ո՛չ միայն չ'ուզէր հասնիլ Լեռնային Ղարաբաղի տագնապի լուծման, այլեւ կ'ուզէր հասնիլ Լեռնային Ղարաբաղի անձնատուութեան:

Հայաստանի վարչապետը ըսաւ, որ հայ ժողովուրդը պատրաստ է փոխգիշուումներու, նոյնիսկ ցաւոտ փոխգիշուումներու, սակայն հայ ժողովուրդը ոչ մէկ պարագայի պատրաստ է անձնատուութեան:

Վարչապետը կոչ ուղղեց տղամարդոց՝ զինուորագրուելու հայրենիքի պաշտպանութեան գործին, իսկ կիներէն խնդրեց քաջալերել տղամարդիկը:

Արցախի Հանրապետութեան նախագահ Արայիկ Յարութիւնեան արձագանգեց այն իրողութեան, որ, հակառակ ԵԱՀԿ-ի Մինսքի խմբակի համանախագահող երկիրներուն ի գործ դրած ջանքերուն՝ շրջանին մէջ մարդասիրական հրադադարի հաստատման միտող, Ատրպեյճանի ռազմաքաղաքական ղեկավարութիւնը կը շարունակէ անտեսել եւ խախտել այդ նպատակով ձեռք բերուած բոլոր համաձայնութիւնները:

Արցախի մէջ տեղի ունեցած մարտերուն զոհուած է եգիտի հոգեւորական շէյխ Մրազ Զալոյեանը: Այս մասին դիմատետրի իր էջին վրայ գրած է «Հայաստանի Երիտասարդ Եգիտիներու Ընկերակցութեան» նախագահ Սայիտ Աւտալեանը:

Արցախի Արտակարգ իրավիճակներու պետական ծառայութեան տեղեկատուութեան եւ հասարակութեան հետ կապերու բաժինէն կը տեղեկացնեն, թէ Ատրպեյճանի զինուած ուժերը թիրախաւորած են Ասկերանի վերին ենթաշրջանը՝ Աւետարանոց, Մատաթաշէն, Սղնախ ու Մոշխմիատ գիւղերը, իսկ Ստեփանակերտի մէջ նկատուած է անօդաչու թռչող սարք:

ՄԱՍԻՍ ՍՐԲ. ԵՊՍ. ԶՕՊՈՒԵԱՆ. «ՀԱՍՄԻՍԲՈՒՄԸ ԵՆՔ ԱՅՍ ՑՈՅՑԻՆ ՃԱՄԲՈՎ ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆ ՊԱՅԱՆՋԵԼՈՒ»

(Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդին խօսքը Արցախի
Հանրապետութեան գորակցութեան ժողովրդային
հաւաքի ընթացքին)

Սիրելի՛ սուրիահայեր,
Երկար տարիներու պատերազմէ ետք, Հալէպը անգամ մը եւս իր ձայնը կը բարձրացնէ անարդարութեան եւ նոր ցեղասպանութիւններու դիմաց:



Այսօր սուրիահայութիւնը եւ մասնաւորաբար հալէպահայութիւնը կու գայ իր ձայնը միացնելու աշխարհով մէկ սրբաբուստ եւ տարածուած մեր ժողովուրդի գաւակներուն ձայնին: Համայն աշխարհին, համայն մարդկութեան եւ մասնաւորաբար միջազգային ընտանիքին անգամ մը եւս պարզելու այն ճշմարտութիւնը, որուն մասին ամբողջ 105 տարի հայ ժողովուրդը արտայայտուեցաւ խօսելով Հայոց Ցեղասպանութեան, Հայ Դատին եւ հայկական հարցին մասին: Հայաստանի, Արցախի եւ Սփիւռքի հայութիւնը այսօր համախմբուած է աշխարհի բոլոր լեզուներով անգամ մը եւս իր ձայնը բարձրացնելու մարդկութեան դէմ, հայութեան դէմ, մեր ազգին դէմ իրագործուած նոր ոճիրի եւ ցեղասպանութեան ի տես եւ արդարութիւն պահանջելու: Սուրիահայութիւնը անցնող տարիներուն ինք եւս պայքարեցաւ ահաբեկչութեան դէմ, ահաբեկչութիւն մը որ հովանաւորուած էր ցեղասպան թուրքին կողմէ: Բազմաթիւ հայեր հեռացան Սուրիայէն, սակայն ահաւասիկ մեծ թիւով հայեր այսօր կը լեցնեն այս հրապարակը, անգամ մը եւս ցոյց տալու, որ Հալէպը կ'ապրի եւ անոր սիրտը կը տրոփէ, ան ունի իր խօսքը, իր կեցուածքը, իր փորձառութիւնը եւ կու գայ իր ձայնը միացնելու Արցախի մեր ժողովուրդի գաւակներուն ձայնին՝ Հալէպէն, Սուրիայէն, Բեասպէն, Դամասկոսէն, Ճեզիրէէն, Գամիշլիէն մեր միասնական պայքարը շարունակելու կամեցողութիւնը անգամ մը եւս հաստատելով:

Ապրի՛ք հալէպահայեր, տակաւին հոս ենք եւ հոս պիտի մնանք: Հալէպէն պիտի պաշտպանենք թէ՛ մեր Սուրիական Հայրենիքը, անոր ամբողջականութիւնը, եւ թէ մեր Մայր Հայաստանն ու Արցախը: Հայ ժողովուրդը եւ սուրիահայութիւնը, մասնաւորաբար հալէպահայութիւնը, իր արիւնը թափեց անցնող տարիներուն վասն հաւատի, վասն հայրենեաց: Այսօր անգամ մը եւս համախմբուած ենք այս ցոյցին ճամբով արդարութիւն պահանջելու եւ իրաւիքելու բոլոր այն պետութիւնները, որոնք արդարութեան կը հաւատան պաշտպանելու Արցախը եւ Արցախի մեր ժողովուրդը:

Հալէպէն կ'ուխտենք բոլորս, որպէս մէկ ամբողջութիւն, մեր գոյապայքարը շարունակել ամեն գնով: Հայը տկար չէ, այսօր Սուրիան տկար չէ, այսօր հալէպահայութիւնը տկար չէ, գոհեր տուաւ իր կամքով, իր հաւատքով եւ իր տեսիլքով եւ անգամ մը եւս կ'ուխտէ հաւատարմութեամբ իր գոյապայքարը մղելու՝ Նուիրական եւ սրբազան արժէքներուն, իր հաւատքին եւ հայրենիքին համար:

Կեցցեն մեր երիտասարդները, կեցցէ՛ հալէպահայութիւնը, որ լեցուց այս հրապարակը եւ այսպիսի յանդգնութեամբ իր ձայնը բարձրացուց:

Սիրելի՛ հարազատներ,
Փառք եւ պատիւ ձեզի: Այսօր Հայաստանը եւ Արցախը հպարտ են ձեզ մով: Այսօր Արցախի սահմաններուն վրայ պայքարող մեր երիտասարդները հպարտ են ձեզ մով: Այսօր բանակ մը կանգնած է ահաւասիկ, ոչ անպայման զէնքով, այլ հաւատքով եւ իր կեցուածքով շարունակելու յաղթական մեր երթը:

ՍՐԲԱԶԱՆ ՀՕՐ ՀՈՎՈՒԿԵԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ ԾԵՄԱՐԱՆ

Երեքշաբթի, 20 Հոկտեմբեր 2020-ի առաւօտը յատկանշուեցաւ Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Ս. Մասիս Սրբ. Եպս. Զօպուեանի ճեմարանի մեծ ընտանիքին այցելութեամբ: Սրբազան Հայրն ու անոր ուղեկցող Ազգ. Իշխանութեան անդամ՝ տիկին Հուրի Ապահունին դիմաւորուեցան ճեմարանի հնամանակային եւ Տնօրէնութեան կողմէ, ապա Սրբազանը հանդիպում ունեցաւ ճեմարանի աշակերտութեան եւ ուսուցչական կազմին հետ ու բարի վերամուտ եւ հեգասահ ուսումնական տարեշրջան մաղթեց բոլորին:



Սրբազան Հայրը շրջեցաւ ճեմարանի վարչական բաժնի գրասենեակները, դասարանները, վերանորոգուած գոյգ տարրալուծարանները եւ ականատես դարձաւ այնտեղ իրագործուած գործնական դասապահերուն:

Աշակերտութեան հետ իր հանդիպման ընթացքին Սրբազան Հայրը, անդրադառնալով ճեմարանի գաղութէն ներս ունեցած վսեմ առաքելութեան, ըսաւ. «Ճեմարանը ինքնին պատմութիւն է. հոսկէ անցած են մեր մեծերը, անցելի ու ներկայի մեր դեկավարներն ու կրթական մշակները: Ծեմարանը տասնամեակներէ ի վեր կը շարունակէ մնալ այն դարբնոցը, ուր կը թրծուի մատողաշ սերունդը ազգասիրութեամբ ու հայրու աննկուն ոգիով»:

Կասկած չունիք, որ երջանկայիշատակ Չարեհ Ա. վեհափառի ու օրուան ազգային գործիչներու իրականացած երազանքը հանդիսացող Ազգ. Զարէն Եփփէ ճեմարանը դեռ երկար տարիներ պիտի շարունակէ իր ծառայութիւնը մատուցել հալէպահայութեան, պատրաստելով հաստատակամ, ազգասեր ու հայութեան ջանք միշտ վառ պահող ապագայ սերունդը:

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆ ՀԱՅՐԸ ԱՅՑԵԼԵՑ ԱԶԳԱՅԻՆ ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆ ԵՒ ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶ

Հայ դպրոցը յոյսի եւ լոյսի դարբնոցն է, ուր հայ աշակերտը բոլոր գիտելիքներուն կողքին կը ստանայ նաեւ հայեցի կրթութիւն, ազգային դաստիարակութիւն:



Շուրջ վեցամսեայ ընդհատումէ ետք, Սեպտեմբեր 15-ին դպրոց վերադարձող Ազգ. Միացեալ Նախակրթարանի աշակերտութեան եւ պաշտօնէութեան վերամուտի խանդավառութիւնը վերանորոգուեցաւ Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Ս. Մասիս Ս. Եպիսկոպոս Զօպուեանի հովուական այցելութեամբ, որ տեղի ունեցաւ Զորեքշաբթի 21 Հոկտեմբեր 2020-ին:

Վարժարանի մուտքին Առաջնորդ Սրբազան Հայրը եւ ընկերակցող պատուիրակները՝ Ազգ. Վարչութեան ներկայացուցիչ տիար Մանուէլ Տէր Մանուէլեան, Առաջնորդի օգնական Հոգեշնորհի հայր Մանուկ արեղայ Պարիխանեան եւ Լաթաքիոյ հոգեւոր հովիւ Աթօ. Տէր Վազգէն քահանայ Բեռնարեան, դիմաւորուեցան Վարժարանի հոգաբարձութեան ատենապետ տիար Գուրգէն Գալուստեանի եւ կազմի անդամներուն ու տնօրէնութեան կողմէ եւ ուղղուելով բակ՝ հանդիպեցան այնտեղ համատեղուած աշակերտութեան հետ:

Սրբազան հայրը աշակերտութեան ուղղած իր խօսքին մէջ անդրադարձաւ նորահաս սերունդներուն հայրերէն լեզուի աւանդը փոխանցելու եւ հայեցի կրթութիւն ջամբելու գծով հայ դպրոցի առանցքային դերակատարութեան, ընդգծեց աշակերտներու ընդհանրապէս բոլոր դասանիւթերու, բայց մանաւանդ մայրենիին հանդէպ պարտաճանաչ եւ բծախնդիր աշխատանքի անհրաժեշտութիւնը: Եզրափակելով իր խօսքը, Սրբազան Հայրը մաղթեց, որ իբրեւ գիտակից հայորդիներ ապագային դառնան ազգին հպարտութիւն ներշնչող անհատներ եւ կանգուն ու կենսունակ պահելով դպրոցն ու ազգը, դրօշը փոխանցեն յաջորդ սերունդներուն:

Անցնող տաս օրերուն վարժարանի աշակերտութեան նախաձեռնութեամբ կազմակերպուած էր դրամահաւաք, օգտակար դառնալու Արցախեան պատերազմին պատճառով այս օրերուն ծանր պայմաններու մէջ ապրող Արցախցի մանուկներու կարիքներու բաւարարման: Յարմար հասցէին փոխանցելու խնդրանքով հանգանակութեան յատուկ արկղիկը վարժարանի տնօրէնութեան կողմէ յանձնուեցաւ Առաջնորդ Սրբազան Հօր, որ բարձր գնահատեց հայրենիքէն հեռու հայրենիքով ապրող մանուկներու սրտաբուխ եւ խորիմաստ այս նուիրաբերումը:

Համագայինի
"Ն. Արթուրեան" Մասնաճիւղի
Վարչութիւն

Գրական
Ցանձնախումբ

ԱՍՄՈՒՆՔԻ ԵՐԵԿՈՅ
ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՄԲ՝
ԱՍՄՈՒՆՔԻ ԴԱՍԸՆԹԱՅՔԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐՈՒՆ
ԴԱՍՏՈՒ՝ ՌԻԹԱ ԿԱՐԵԱՆ ՏԻԵՊԻԵԱՆ

Տեղի պիտի ունենայ 1 Նոյեմբեր 2020, Կիրակի երեկոյեան
Ժամը 6:00-ին << Լ.Շանթ >> սրահէն ներս:

Հրահրատում

ՄԱՐԻԱ ԳԱԲՐԻԷԼԵԱՆ. «ԱՐՑԱԽԻ ՊԱՏԵՐԱԶՍԸ ՄԵՐ ԱՐԺԱՆԱՊԱՏՈՒՈՒԹԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆ Է, ԱՅԼ ԵԼՔ ՉՈՒՆԻՆՔ, ԿԱՄ ՊԻՏԻ ՅԱՂԹԵՆՔ, ԿԱՄ ՊԻՏԻ ՅԱՂԹԵՆՔ»

(Արցախի գորակցութեան ժողովրդային հաւաքին արտասանուած հայերէն բացման խօսքը)

Պատմութիւնը այնքան դասեր տուած է մեզի, որ այլեւս քաղաքական կամ դիւանագիտական սխալներ գործելը անուշիմութեան ցուցանիշ կը համարուի: Իսկ մենք ուր ենք անուշիմութենէն:

Պատմութիւնը այնքան դասեր տուած է մեզի, որ այլեւս ազգին հաշուոյն ճակատագրական վրիպումներ գործելը անմտութեան փաստարկ կը սեպուի: Իսկ մենք ուր ենք անմտութենէն:

Պատմութիւնը այնքան դասեր տուած է մեզի, որ այլեւս հողի գիշում կատարելը հայրենամոռացութիւն կը նկատուի, իսկ մենք ուր ենք հայրենամոռացութենէն:

Ինքնահիացում չէ անտարակոյս, սակայն անհերքելի ճշմարտութիւն է մեր հանճարեղութիւնը, հայրենասիրութիւնն ու հայրենասիրումը:

Շնորհիւ մեր բնատուր տաղանդին, մեր ձեռք բերած հմտութիւններուն, մեր ժառանգական արիւթեամբ ու մեր ջանասիրութեամբ յաջողած ենք դիմադրել ամենէն ահաւոր յարձակումները անգամ, յաջողած ենք դէմ դնել ամենէն ահեղ թշնամիին, որովհետեւ մեր մարտը միշտ արդար եղած է, մեր պայքարը ընդմիշտ մարդկային հիմունքներով ընթացած է: Մենք չենք ներխուժած ազգերու ու ժողովուրդներու երկիրներ, չենք տիրած այլ ժողովուրդներու վրայ, չենք յափշտակած անարներ եւ չենք գործած անարներ:

Մենք ուր գացած ենք կառուցած ենք, ուր ապրած ենք մարդասիրութիւն սփռած ենք:

Մենք միշտ յաղթած ենք, երբ ուժեղ թագաւորութիւն ունեցած ենք, անյաղթահարելի բանակ ունեցած ենք: Աշխարհակալ դարձած ենք, երբ միասնականութիւնը մեզ առաջնորդած է եւ մենք միայն մեր գերխնդիրներով զբաղած ենք՝ մէկդի թողլով տասներորդական տարակարծութիւնները: Երբ որպէս մէկ մարդ, մէկ ձեռք, մէկ շունչ միաւորուելով որոշած ենք մեր արժանաւայել տեղը ունենալ աշխարհի վրայ:

Այսօր եւս նոյն սկզբունքներով ու նոյն կորովով պիտի ընթանանք դիմադրելու մեր դարաւոր թշնամիին, ցեղասպան թուրքին, որ աջակցելով Ատրպեյճանին կը ջանայ իր վաղեմի սադրանքային ծրագիրները իրականացնել եւ կրկին ցեղասպանութեան ենթարկել հայ ժողովուրդը:

Անցնող շաբաթներուն Թուրքիան զինուորական փորձերու պատրուակով Ատրպեյճան փոխադրեց զինուորական օդանաւեր եւ տարբեր տիպի զինատեսակներ, որոնք այսօր ուղղակիօրէն ղեկավարուելով Թուրքիայէն Արցախի եւ Հայաստանի դէմ ռազմական գործողութիւններ կ'իրականացնեն:

Սիրելի՛ ժողովուրդ, Յատկապէս մենք՝ սուրիահայերս, եւ ի մասնաւորի հալէպահայերս, լաւապէս ճանչցանք միջազգային նեւզ նախագիծերով առաջնորդուող ահաբեկական շարժումներու եութիւնը, մեր մարմին վրայ զգացնել անոնց հրէշագործութիւնները, մեր քաջարի նահատակներու եւ անմեղ զոհերու հողի յանձնման ցատումով ապրեցանք անոնց անմարդկայնութիւնը: Այսօր Սուրիայէն Ատրպեյճան փոխադրուած եւ փոխադրուող նոյն վարձկան ահաբեկիչներն են, որոնք Թուրքիոյ դասաւորումով, եւ անոր անմիջական մասնակցութեամբ միջազգային ահաբեկչութեան նոր դրսեւորումներ կու տան: Անոնց գոյութիւնը սպառնալիք է ոչ միայն տարածաշրջանի երկիրներուն, այլ ընդհանրապէս ողջ մարդկութեան:

Մեր պատուաբեր վարկը հաշտ աչքով չէ դիտուած նախանձի հուրով լեցուած թշնամիներուն համար, Օսմանեան Կայսրութեան եւ անոր իրաւական ժառանգորդին՝ Թուրքիոյ համար, որ ե՛լ անցեալին, ե՛լ այսօր կը շարունակէ իր նկրտումները ամենատարրի ու ճիւղային ծրագիրներով:

Իսկ ինքզինք յառաջադէմ համարող աշխարհի մեծ տիրութիւնները կը շարունակեն կոյր ու խուլ ձեւանալ Թուրքիոյ գործած ոճիրներուն ի տես, անոնք խցաններով փակած են իրենց ականջները եւ ականակապիճները անարդարութեան շողով ծեփած:

Դեռ անհասկնալի է հայութեանս համար, թէ ինչո՞ւ են արդարութեան միջազգային օրէնքները, ինչո՞ւ հիմնադրուած է ՄԱԿ-ը, ինչո՞ւ մշակուած են մարդու իրաւունքներու պաշտպանութեան օրէնսգիրքերը եւ ինչո՞ւ կը գործեն մարդկային արժէքներու պաշտպանութեան մարմինները:

Թող ամէնան մարդկային արդարութեան դրօշը բարձրացնող բոլոր երկիրները, ազգերն ու անձնաւորութիւնները, երբ Վանն ու Սասունը կը շարունակեն անարդարաբար մալ բարբարոս թուրքին ձեռքը:

Թող ամէնան մարդասիրութեան կարգախօսներ վանկարկողները, երբ կը շարունակեն լուռ մալ Արցախի խաղաղ բնակչութեան դէմ թուրքերու, ատրպեյճանցիներու եւ վարձկան ահաբեկիչներու կողմէ գործուած ոճիրներուն ի տես:

Թող ամէնան բոլոր երկչոտները, որոնք հազարամեակներու

ՊԱՅՔԱՐ ԹՈՎՍԱՍԵԱՆ. «ԱՐՑԱԽԻ ՄԵՐ ԶԵՐՈՍՆԵՐՈՒՆ ԱՐԵԱՆ ԿԱՆՉԸ ՆՈՐԱՅԱՍ ՍԵՐՈՒՆԴՆԵՐՈՒՆ ՅԱՂԹԵՐԳՈՒԹԻՒՆԸ ՊԻՏԻ ԸԼԼԱՅ»

(Արցախի գորակցութեան ժողովրդային հաւաքին արտասանուած արաբերէն բացման խօսքը)

Մենք քիչ ենք, սակայն մեզ հայ կը կոչեն: Մենք ցեղասպանութիւն ապրեցանք, մահը համտեսցինք եւ փրկուեցանք, սակայն չխուսափեցանք մահէն յանուն մեր ազատութեան եւ պատմական ժառանգութեան:

Ճշմարտութիւնն ու արդարութիւնը մարդուն հետ ծնած են, որպէսզի դառնան անոր սուրն ու նիզակը, որոնցմով պիտի պաշտպանուի չարիքէն, որպէսզի դառնան անոր արեւը, որ ազատութեամբ եւ արժանապատուութեամբ ջերմացէ իր կեանքը: Մարդկութեան թշնամիները, սակայն, կ'աշխատին ծածկել արեւը իրենց խաւարամտութեամբ եւ բռնակալութեամբ: Անոնք այս բոլորը չեն կրնար ի գործ դնել այն ազգին դէմ, որ սպանուեցաւ, գաղթական դարձաւ, իր գաւազները անշիրիմ մնացին անապատներու աւազներուն տակ, այրուամենայնիւ ան սրբացուց իր նահատակները եւ խիտեց անոնց արեան վրէժը լուծել:

Սիրելիներ, Տարիները կը գլորին, ժամանակները կը փոխուին, բայց պատմութիւնը կը կրկնուի: Ահա իրապարակ իջած է նոյն անողորմ օսմանցին, որ ծարաւ է մարդասպանութեան, արիւնահեղութեան եւ ամէն գնով կը նկրտի խլել ժողովուրդներու ազատութիւնը: Կը թափառի աշխարհին աչքին առջեւ, պատերազմներ ու տազնապներ կը իրահրէ՝ օգտագործելով իր ահաբեկիչ վարձկանները՝ յազեցնելու իր թուրանական բնագոյները, հաւակնութիւններն ու պատրանքները: Ան մերթ Սուրիա, մերթ Լիպիա, մերթ Իրաք, մերթ Յունաստան եւ վերջապէս Արցախ իր վարձկան ահաբեկիչները տարածելով կը սպանէ, կը թալանէ տեղւոյն ժողովուրդը:

Չգոյշ, սակայն, մոլագար օսմանցի, այնպէս ինչպէս սուրիացիները իրենց կամքով եւ պայքարով յօսք ցնդեցուցին ձեր երազները, այնպէս ալ պիտի ընեն Արցախի հերոսները: Այն Արցախին, որ անբաժան մասնակը պիտի մնայ Հայաստանի, եթէ նոյնիսկ սեւ պատմութիւնը շուրջ դար մը առաջ փորձեց խլել գայն: Արցախը հայկական է իր արմատներով, սրտով եւ գոյապայքարով:



Իսկ դուռն, ո՞վ խուլ, համր եւ կոյր կրեմուտք, Դար մը ամբողջ հանդիսատեսի դերին մէջ մնացիր ու յանդակութիւն չունեցար 20-րդ դարու ամենասարսափելի ցեղասպանութիւնը գործող յանցագործը պատժելու: Այսօր, ան նոյն ոճիրները կը կրկնէ Արցախի մէջ, ո՞ւր ես դուռն: Այս սանձարձակ համաճարակին՝ օսմանեան պատրանքին, ե՞րբ վերջ պիտի տաս: Ո՞վ ազատութեան, մարդկայնութեան եւ իրաւունքներու պաշտպան ձեւացողներ, ո՞ւր եք դուք: Հակառակ ձեր լռութեան, Աստուծոյ եւ պատմութեան առջեւ կը խոստանանք ճարձատել լռութեան պատը մեր հողը պաշտպանող իրաւաստներու դրոյզներով, մեր երկինքը պաշտպանող օդանաւերու սլացքով եւ պիտի ստիպենք ձեզ, որ ճշմարտութիւնը պարզէք եւ Արցախի Հանրապետութիւնը ճանչնաք: Ձեր կոյր աչքերն անգամ պիտի տեսնեն սխրանքները այնպիսի հերոսներու, որոնց նմանը չէ ծնած պատմութիւնը, որոնք կը նախընտրեն մահուան գիրկը նետուիլ բաց ճակատով, քան ստրուկ դառնալ եւ զիջիլ իրենց պատմական հողերը:

Շար.՝ Էջ 7 ➤

պատուաբեր քաղաքակրթութիւն ունեցող ազգիս արդար իրաւունքներու վերատիրացման համար որպէս հաշմանդամ դիտողի դերի մէջ կը մնաս:

Արցախի պատերազմը մեր արժանապատուութեան պատերազմն է, այլ ելք չունինք, կա՛մ պիտի յաղթենք, կա՛մ պիտի յաղթուենք, հակառակ պարագային ի՞նչ երեսով պիտի նայինք մեր Նորահաս սերունդներու աչքերուն, այն սերունդներուն, որոնց դաստիարակեցինք այն համոզումով, որ հողը ամենաթանկ բանն է մեզի համար, հողը ազգային այն արժէքն է, որ կարելի չէ փոխարինել այլ արժէքներով:

Պիտի հասկնաք, միջազգային ընտանիք, Եւրոպա՛, Ամերիկաներ՛ եւ Արաբական Աշխարհ, մեր համբերանքն ալ պարագիծ ունի, հայրենիքի մեր կարօտի կրակը հրդեհի վերածուելու ժամը չ'ուշանար, կարօտը Վանի, Կարնոյ, Պիթիսի, Տրապիզոնի, Ծոփաց աշխարհի: Մեր կարօտը Նախիջեւանի ու Ջաւախքի:

Այնպէս ինչպէս պաշտպանեցինք Սուրիական Հայրենիքը, նոյն թշնամիին դէմ պիտի պաշտպանենք Արցախ Հայրենիքը:

Կասկած չկայ, Արցախի պատերազմը մերն է:

Պատի՛ւ մեր հայրենիքին, պատի՛ւ մեր ազգին, պատի՛ւ մեր նահատակներուն:

ՅԻՄԻՍ-ՅԱՐԱԲ ԱՌԱՆՑՔԸ ԱՆԴԱՄԱԼՈՒԾՈՒԾ


Կարո Արմենյան

Ժամանակն է, որ հարցերը դնենք մերկապարանոց եւ առաջին հերթին՝ հարց տանք թե իսկապես ի՞նչ տեղի կ'ունենայ Ռուսաստան-Հայաստան-Իրան, Յիմիս-Յարաբ առանցքին շուրջ, հիմա որ պատերազմը ստացած է խիստ գոյուղեակական բնույթ մեր երկրին համար: Կ'ակնարկեմ այն աշխարհաքաղաքական եւ ուժային առանցքին, որ ցարդ վճռականորեն խափանած է ու կը խափանե փակթուրքի մի ճանապարհը:

Այս առանցքը պաշտոնապես ձեւաւորուած զինակցութիւն մը չէ: Ան ի մի եկած կեանքի ուժով: Անոր մէջ ընդգրկուած պետութիւններն ու տարածաշրջանային ոչ-պետական ուժերը գործած են որպէս բնական դաշնակիցներ եւ որոնք գիտեն պատմութեան փորձով, որ իրենց կենսական խնդիրները լուծելու համար կախուած են իրարմէ: Անոնք «կ'ապրին» հաւաքաբար եւ իրարմով: Եւ առանց անոնց փոխ-սնուցիչ ուժականութիւններուն, առանցքը՝ ի՞նքն է, որ կը վտանգուի որպէս կենսական ամբողջութիւն:

Հաստատուած իրողութիւն է, որ Երտողանի «սոր օսմանակաւորութիւն»ը լայնօրէն կը հանգչի տարածաշրջանի ներքին հակասութիւնները հրահրելու փխրուն հաւասարակշռութիւնները խախտելու թուրք պետութեան հետեւողական քաղաքականութեան վրայ, որ այժմ բացառիկ ուժգնութեամբ ցոլացում կը գտնէ ներկայ պատերազմի քաղաքական կնճիռներուն մէջ:

Սկզբունքով, Ռուսաստան եւ Իրան Կասպեան տարածաշրջանի մեր բնական դաշնակիցներն են եւ իրենց ազգային գերագոյն շահերէն ելլելով



պետք էր, որ ցարդ «սորթած» ըլլային իրենց թեզ անիքները եւ խիզախօրէն գօրովիզ կանգնած՝ Հայաստանի եւ Արցախի ռազմական գործողութիւններուն: Պետք էր, որ հարցը իրենցը ըրած ըլլային առանց «հրաւեր»ի սպասելու, որպէսզի արագօրէն խափանուէր թուրք եւ ատրպէյճանական Նախայարձակումը, որ ստոյգ եւ անվիճելի սպառնալիք մըն է Նաեւ իրենց կենսական շահերուն: Փաստը այն է, որ այդ բանը տեղի չունեցաւ եւ հարց է, թե ինչո՞ւ տեղի չունեցաւ: Ինչո՞ւ առնականութեան դաշտը լայնօրէն բաց ձգուեցաւ թուրք եւ ատրպէյճանական ոճրային արկածախնդրութեան առջեւ:

Նորութիւն չէ, որ Թուրքիոյ ծաւալապաշտ քաղաքականութեան երկու հզօր գէնքերն են փակթուրքի մը ու փանիսլամիզմը: Այս գէնքերը կատարելագործուած են թուրք պետութեան կայսերական գինարաններուն մէջ դարերու ընթացքին եւ բազմաթիւ սերունդներու հետեւողական յարձակապաշտութեամբ: Թուրքիան դիմած է ամէն մեքենայութեան, որպէսզի կարողանայ իսլամական աշխարհին կողմէ ընդունուի որպէս առաջնորդող ուժը փլուզելու իսլամականութեան գրգռելով այս վերջինի ամենէն մութ բնագոյնները եւ շարունակաբար բեւեռացնելով զայն ընդդէմ Արեւմուտքին, ընդդէմ Ռուսաստանի, ընդդէմ քրիստոնէայ աշխարհին: Թուրքիան Նաեւ կեդրոնական օճախն է ու առաջնորդը՝ համաթրքական «շարժման», որ կը գործէ իր կայսերական ազդեցութիւնը տարածելու յստակ մտասելեռումով Ռուսաստանի եւ Կեդրոնական Ասիոյ կոյս տարածութիւններէն ներս: Երկու օր առաջ հրապարակուած Նախագահ Փութինի տատամտոտ արտայայտութիւնները ներկայ պատերազմի մասին լիովին բարացուցական են: Ինքնավստահութեան մարմնացում հանդիսացող Ռուսաստանի առաջնորդը երբեք այսքան անօգնական դիրքի մէջ չէր յայտնուած համաշխարհային եթերի կայաններէն: Երբեք չէր խօսած կարեկցող «փիլիսոփայ»ի տխրամած հոգեվիճակով... Եւ անշուշտ՝ անխուսափելի հարցումը՝ «Արդեօ՞ք այս այն երկիրն է եւ այն երկրի Նախագահը՝ որ ենթադրաբար պիտի գործէր ղեկավար ուժի վճռական դիրքերէն այն իսկ տարածաշրջանին մէջ՝ ուր իր խօսքը պիտի ունենար ամուսնացնող օրէնքի ուժ...»: Պատասխան՝ «Այո՛, այս այն երկիրն է եւ այն երկրի Նախագահը՝ որ այսօր հարկադրուած է շատ մեծ նրբամտութեամբ կառավարելու Ռուսական Դաշնութեան ներքին հաւասարակշռութիւնները եւ յատկապէս ռուս մեծ պետութեան ներքին իսլամական գործընթացը...» Պիտի ընդունիլիք, որ առիւծին ալ ձեռքերը ի վերջոյ կապուած են, երբ հարցը

կը վերաբերի Կովկասի քառսը կառավարելու գործին...

Փաստը այն է, որ Թուրքիա իր փանիսլամական խաղաքարտով տեւաբար անապահովութիւն կը ներշնչէ այսօր ռուս մեծապետական իշխանութեան: Ան կրցած է Արցախեան ներկայ պատերազմը գունաւորել որպէս «ճիհատ», այսինքն՝ որպէս սրբազան պատերազմ մահմետականներուն եւ յաջողած կը թուի ըլլալ պաշտպանողականի վրայ դնել Մոսկուան: Փութին լուրջ երկընտրանքի մէջ կը գտնուի Արցախի պատերազմով: Ան չ'ուզէր *ռիսք* առնել Արցախի սիրոյն, թեկուզ ժամանակաւորապէս վտանգելով Ռուսաստանի հեռահար շահերը Կովկասի մէջ... Յայտնուիլ հայկական ուժի կողքին ռազմական եւ այլ Նախաձեռնութիւններով կը նշանակէ մաս կազմել «Խաչակրաց արշաւանքին»... որմէ ամէն կերպ խուսափելու պատճառ ունի այսօր Մոսկուան իրերու վերել յիշուած տրամաբանութեամբ:

Անշուշտ իսլամական գործօնը միակ ազդակը չէ ռուսական վերապահութիւնը խթանող: Օրին, Մոսկուան «ըմբռնումով» վերաբերուեցաւ Պաքու-Թիֆլիսի-Ճեյհան Նաւթամուղի կառուցման գործին թոյլ տալով, որ ան իրականութիւն դառնայ Արեւմտեան գործընկերութեամբ եւ ֆինանսաւորումով: Մոսկուա իր ախորժակները վերապահեց Ատրպէյճանական քարիւղէն գալիք եկամուտներուն... Ալիւններու ռազմամուտները իրաշալի սննդաղբիւր մը եղաւ Ռուսաստանի ռազմական ճարտարարուեստին համար: Ռուսական գէնքի անկուշտ յաճախորդը՝ Ալիւն շատ ամուր եւ փոխ-շահաւետ յարաբերութիւններ կրցաւ դարձել Մոսկուայի պետական համակարգին հետ շնորհիւ սպարազինման տրամադրուած իր անյատակ պիտոճեւերուն: Ատրպէյճանի ռազմական գնումներուն միջոցով, ռուս պետական գանձարանը ինքնաբերաբար դարձաւ ատրպէյճանական քարիւղի էական «համատեր»:

Նոյնիսկ սպրդասացութիւններ շրջան ըրին գէնքի այս առեւտուրէն բաժին ստացող օֆշորային այլեւայլ հաշիւներու մասին մատնացոյց ընելով ռուսական օլիգարխիան (փտած ղեկավարութիւն) իր սադայելական առնչութիւններով:

Իրականութիւնը այն է, որ այս ծաւալուն յարաբերութիւնը Մոսկուայի եւ Պաքուի միջեւ որակական մեծ տարբերութիւն մը ստեղծեց եւ այդ տարբերութիւնն է, որ ի վերջոյ սահմանեց մեր եւ Ատրպէյճանի միջեւ Մոսկուայի իրական շահագրգռութիւնները: Ճիշտ է, որ Մոսկուա չզլացաւ իր ռազմանիւթային հայթայթումները Նաեւ Հայաստանին: Ներկայ պատերազմը, սակայն, կը հանդիսանայ «թթու փորձ»ի (acid test) փորձագետինը այս մարզին մէջ: Մեր եւ Ատրպէյճանի միջեւ Ռուսաստանի համեմատական շահագրգռութեան իսկական ցուցանիշն է ան վերոյիշեալ տարբերութեան անկայութիւնը լայնօրէն հաստատող: Փաստացի տուեալները մեր հասողութեան մէջ չեն այս քննարկումը լիարժեքօրէն ընել կարենալու համար: Պետք է ակնկալել, որ հայկական գինուժի ռազմագետները՝ իրենք մօտեն կը հետեւին այս իրականութեան եւ կ'առնեն անհրաժեշտ քայլերը ռազմանիւթի այս ճակատագրական բացերը դարձնելու համար: Մենք կ'ուզենք պարզապէս դիտել տալ, որ այս բացերը պատահական չեն: Անոնք ծնունդն են Ռուսաստանի ճակատագրական երկընտրանքին:

Երկընտրանքը նոյնքան սուր կը թուի ըլլալ Իրանի՝ պետական ներքին ոլորտին մէջ: Իրանեան հանճարը կը կայանայ այն բանին մէջ, որ երկրի ղեկավար դասը կրցած է միշտ յաջողապէս եւ անշուշտ կառավարել Իրանի բազմազգ խճանկարը յենուելով շիի իսլամութեան առաջնորդի կարելոր հանգամանքին:

Իրանի աքիլլետեան կռունկը, սակայն, Իրանի Ատրպատական Նահանգն է իր ազերի բնակչութեամբ: Նահանգը բաժնուած է Ատրպէյճանէն Արաքս գետի հարաւային հոսանքով: Ան սահմանակից է Նաեւ Հայաստանի եւ Արցախի հանրապետութիւններուն, որոնք կը բաժնեն Ատրպէյճանը Նախիջեւանէն: Միւս կարելոր հանգամանքը այն է, որ Իրանի տարածքը ամբողջութեամբ կը գրկէ Նախիջեւանը ութ քիլոմետրի նեղանցք մը միայն գիշերով Թուրքիոյ... Նահանգին արեւմտեան սահմանագիծը թուրք-իրանեան սահմանն է, որ կ'անցնի Արեւմտեան Հայաստանի հողերէն: Յիշենք Նաեւ, որ թրքական այդ նեղանցքը Թուրքիան կը պարտի բոլշեւիկեան Ռուսաստանին: Զեմալական Թուրքիոյ պնդումներով, այդ շիճու բացուածքը կարելի դարձաւ 1921 թուի Մոսկուայի Դաշնագրով. բան մը՝ որուն իր հաւանութիւնը տալու պարտադրուեցաւ Նաեւ Իրան: Այդ նեղ բացուածքէն է, որ Թուրքիա իր հրասայլերն ու հրետանին կը մտցնէ Նախիջեւան եւ առատ ռազմանիւթով կը պարենաւորէ Նախիջեւանի ճակատը:

Ալեւի կարելոր հանգամանքը այն է, որ Իրանի ազերի բնակչութիւնը - եւ Ատրպէյճանի բնակչութիւնը ընդհանրապէս՝ կը պատկանի շիի իսլամութեան, որուն հոգեւոր ու քաղաքական սանձերը կը գտնուին Իրանի ձեռքին... Մինչ Ատրպէյճանի բռնատիրական իշխանութիւնը իր քաղաքականութեամբ սերտօրէն կապուած է Թուրքիոյ, ազերի ժողովուրդի հոգեւոր արմատները կը գտնուին Իրանի մէջ: Եւ այս երկուութիւնը մեծ նշանակութիւն ունի Կովկասեան քաղաքական ռազմաբեմին վրայ Իրանի յարաբերութիւններու բնոյթը հասկնալու տեսակետէն:

Անցնող բազմաթիւ տարիներու ընթացքին, Իսրայելի եւ Արեւմուտքի կողմէ փորձեր եղան Ատրպատականի ազերի բնակչութիւնը ոտքի հանելու եւ շրջանը խռովութեան բոյնի վերածելու՝ իրանեան սպառնալիքը հակակշռելու յստակ միտումով: Իրան յաջողեցաւ նմանօրինակ փորձերը ցարդ շրջափակել եւ մեկուսացնել: Եւ սակայն խափանարարական աշխատանքը կը շարունակուի Իսրայելի հետախուզական կառոյցներուն

ՀԻՄՆՈՒՄ-ՅԱՐԱԲԵ...

Սկիզբ՝ էջ 6

կողմէ, որոնք ամրացած են Պաքուի մէջ... Պէտք է ենթադրել, որ Իրան, իր կարգին, յոյսեր ունէր Ատրպատականի ազգային հաւաքականութեան միջոցով իր քարոզչութիւնը տարածելու Ատրպեյճանի ժողովրդական զանգուածներէն ներս: Այդ ճիգն ալ կը շարունակուի զանազան դրսեւորումներով: Եւ սակայն Ատրպատականի քաղաքական տարածքը հետզհետէ անելի ականապատուած կը թուի ըլլալ:

Յստակ է, որ Պաքու եւ Անքարա իրենց փանթորքիստական քարոզչութեան բեւեռ ընտրած են Ատրպատականը իրենց դաշնակից ունենալով Իսրայէլի եւ Արեւմուտքի հետախուզական ծառայութիւնները: Թեհրան արդէն իսկ կը տեսնէ այս բոլորին քաղաքական հետեւանքները իր իսկ քաղաքական խաղաղաշտէն ներս: Իրանի ազգային համայնքը, որ Իրանի բնակչութեան առնուազն 16%-ը կը ներկայացնէ, նոր վերածնունդի մը մէջ կը գտնուի այս օրերուն... Իսլամական Յանրապետութեան ղեկավարները, ներկայ պատերազմի վերաբերմամբ, հարկադրաբար ընտրած են զգուշաւորութեան ուղին, քաջ գիտակցելով հանդերձ Իրանի հեռահար շահերուն, որոնցմով իրենք կապուած են Հիւսիս-Յարաւ Առանցքին եւ հետեւաբար՝ Յայաստանին ու Արցախին...

Այս բոլորէն կը հետեւի այն, որ Թուրքիա կարելի թափանցում մը իրագործած է Կովկասի աշխարհաքաղաքական շահերու հիւսուածքէն ներս: Պատերազմը, որ տեղի կ'ունենայ ատրպեյճանական քարիւղի անսպառ թուող պիտոններով, Թուրքիոյ կողմէ ծրագրուած է տարածաշրջանային տարողութիւն ունեցող ծաւալապաշտ գործարքի մը մէկ օղակն է միայն: Յարդ Յայաստանն ու Արցախը իրենց վտիտ հողատարածութեամբ անքակտելի - եւ բանալի - մասն էին Հիւսիս-Յարաւ Առանցքին, որուն շարժիչ ուժերն էին Ռուսաստանն ու Իրանը: Որքան ատեն որ այս վերջինները ուժականութիւն կը հաղորդէին առանցքին, Յայաստանն ու Արցախը արդիւնաւորապէս կը զգտնէին թշնամիին ոտնձգութիւնները: Կը զգտնէին առանց ներկայ անբաժնութեան եւ թանկագին գոհերուն: Այն դերակատարութիւնը, որ բնականաբար վիճակուած էր մեր երկու հանրապետութիւններուն, մերն էր եւ մեր բռունցքը երբեք չընկրկեցաւ Առանցքի իրենց հատուածին մէջ: Մերկ իրականութիւնը, սակայն, այն է, որ այսօր մենք ենք միայն առանցքը ոտքի պահող: Մենք ենք, որ մեր սակաւ ուժերով - եւ առանձին - կը փրկենք Մոսկուայի եւ Թեհրանի կաշին... առանցքը անդամալուծուած է: Մոսկուան եւ Թեհրանը պարպած են ռազմադաշտը: Անելի վա՛տ: Անոնք պահուողտած են հայ գիտնորի ետին:

Կը խուսափիմ մանրամասնութիւններէ զանոնք թողլով մեր ռազմագետներու դատողութեան: Որոշած ենք չխօսիլ, որքան ատեն որ պատերազմը կը շարունակուի: Բայց ընդունինք, որ ճակատագրական բացեր կան Առանցքի երկայնքին եւ մեր հանրութեան արդար ակնկալութիւնն է, որ մեր ռազմական եւ քաղաքական պատասխանատուները ընդփոյժ գբաղուի այդ բացերով:

Այնուամենայնիւ կարելի է չբարձրաձայնել Մոսկուայի, Թեհրանի եւ, անշուշտ, Արեւմուտքի յանցաւոր անգործութեան մասին: Մեր բանակը հրաշքներ կը գործէ բոլոր ճակատներուն վրայ, բայց հակառակ մեր գիտնորի փայլուն գործողութիւններուն մեր երկիրը ամէն օր անելի կը վերածուի փլատակի:

Ռուսաստանն ու Իրանը մեծ սխալ մը կը գործեն դիտորդի ողորմելի դիրքերէն խօսելով եւ փուճ յորդորներ միայն առատաբաշխելով: Զմոռնանք, որ այս հրէշը սպարազինողը Ռուսաստանն էր եւ՛ վերջերս կ'իմանանք՝ նաեւ Իրանը: Ու չմոռնանք, որ մեր ժողովուրդը իր ամէնէն պայծառ զաւակներով պաշտպանած է Ռուսաստանն ու Իրանը, երբ պատերազմի մէջ էին իրենք: Այսօր եւս Արցախի ճակատներուն վրայ մենք կը կռուինք նաեւ իրենց զաւակներու ապագային համար: Նախանձախնդրօրէն տեր կանգնիլ Հիւսիս-Յարաւ Առանցքին՝ նա՛եւ Մոսկուայի եւ Թեհրանի առաքելութիւնն է եւ պարտաւորութիւնը: Փախուստ տալ այդ պարտաւորութենէն կրնայ միայն արագացնել մեր հաւաքական պարտութիւնը թուրք եւ ատրպեյճանական ֆաշիզմի դիմաց:

Կը կրկնեմ: Թուրք եւ ատրպեյճանական նախադրականութիւնը (aggression, ագրեսիա), ըստ էութեան, ուղղուած է Հիւսիս-Յարաւ Առանցքին դէմ, որուն երեւելի ճակատն է միայն Արցախը եւ անշուշտ՝ Յայաստանը: Եթէ հայկական կողմը չկարողանայ իր ուժերով տոկլալ իրեն ուղղուած կայսերական գերագանգ գրոհին եւ եթէ մեր հասարակաց թշնամին կարողանայ բանալ իր ճանապարհը դէպի Նախիջեւան, ոչ միայն մենք, այլեւ ամբողջ Հիւսիս-Յարաւ Առանցքն է, որ փուլ պիտի գայ սկիզբ դնելով Ռուսական Դաշնութեան եւ Իրանի աստիճանական անդամախառման գործընթացին:

Այսօր կենսական անհրաժեշտութիւն է, որ Առանցքի պետութիւնները եւ յատկապէս Ռուսաստանը վերադառնան զգաստ եւ հեռատես քաղաքականութեան, որ կը բխի բոլորին հեռահար շահերէն: Թուրքիան կառչած է իր ցեղասպանական եւ ծաւալապաշտ քաղաքականութեան յաջորդ հարիւր տարուան իր հարցերը լուծելու վճռականութեամբ: Թուրքիան ամբողջ տարածաշրջանին ճակատագիրն է, որ կը ճշտէ իր յարձակողական քաղաքականութեամբ: Մոսկուա եւ Թեհրան իրենց ներկայ կրաւորականութեամբ պիտի շարունակե՛ն գործնականօրէն մեղսակցիլ Թուրքիոյ, թէ պիտի վերստանձնեն ղեկավարի իրենց լրացուցիչ դիրքերը տարածաշրջանին մէջ... հիմա է վայրկեանը այս հրէշը իր որջին մէջ խեղդելու:

ԱՐՑԱԽԻ ՃԱՆԱԶՄԱՆ ՊԱՅՆ Է

Գեորգ Խուրիդեան

Վերջին երկու օրերի ընթացքում Ատրպեյճանի նախագահ Իլհամ Ալիեւ արդէն երկու անգամ յայտարարել է, որ ինքը պատրաստ է հրադադարի հաստատմանը եւ ԵԱՀԿ Մինսքի խմբի համանախագահների առաջադրած սկզբունքների կիրարկման:

Հասկանալի է, որ ազատագրուած տարածքների մի մասի զաւթման պայմաններում դա հաւասարագօր է լինելու տե-ֆաքտօ վիճակը տե-իւրեի վերածելուն: Այսինքն՝ մի մասը պատերազմով են վերցրել, մի մասն էլ



ինքներդ կը տաք՝ որպէս Մատրիտեան սկզբունքների իրականացման առաջին քայլ, իսկ կարգավիճակի հարցն էլ կը մնայ անորոշութեան մէջ, քանի որ Յայաստան կը գրկուի այն առաջ տանելու հիմնական բանակցային լծակից՝ ազատագրուած տարածքներից:

Արդիւնքում ստացուում է, որ Պաքուի բռնապետը ոչ միայն չի պատժուելու իր կատարած յանցանքի համար, որը հազարաւոր կեանքեր արժեք երկու կողմերին, այլ դեռ հերոսի կեցուածք է ընդունելու՝ սեփական ժողովրդի առջեւ:

Հասկանալի է որ նման պայմաններում այժմ էլ հայկական կողմն է հանդէս գալու հրադադարի առաջարկներն անտեսողի դերում՝ միևն յայ փորձելով ետ բերել թշնամու զաւթածի գունէ մի մասը: Բայց արդե՞օք դա բաւարար է՝ անցած մէկ ամսուայ արիւնոտ տեսաշարի արագ վերախաղարկման համար: Կարծում ենք, որ ոչ, քանի որ Ալիեւի ներկայ անհանգստութիւնը միանգամայն երկու պատճառ ունի:

Առաջինը Իրանի բացառապէս ռազմական նախապատրաստութիւններն են՝ Արցախի հարաւում արդէն ձեւաւորուած թուրքական կիսամիջանցքի դէմ յանդիման:

Երկրորդը Թուրքիայի սադրիչ կեցուածքն է, որը հակամարտութեան գօտի գօրքեր ուղարկելու իր ցուցադրական պատրաստակամութեամբ եւ Ռուսաստանին ձեռնոց նետելով վտանգաւոր վիճակ է ստեղծում Պաքուի բռնապետի համար:

Ատրպեյճանը չի կարող շարունակել պատերազմը՝ Ռուսաստան- Իրան -Յայաստան- Արցախ քառանկիւնի արանքում: Ուրեմն՝ նա պիտի փորձի կամուրջները վերականգնել Ռուսաստանի հետ՝ ազատագրուած տարածքների մի մասը հետ ստանալու պայմանով: Բայց կ'ընդունի՞ արդե՞ք Մոսկուան «տարած հետ բերած անբախտ աղջկան», երբ վերջինս մի քանի տարի կազդուրուելուց յետոյ նորից փախչելու է իր փեսայի մօտ: Դատելով Ռուսաստանի նախագահի վերջին զգուշաւոր կեցուածքներից՝ կարող է նաեւ ընդունել, եթէ Յայաստանը ճիշդ չգնահատի իրավիճակը եւ չկատարի իր քայլը: Յայաստանը արագօրէն պէտք է օգտուի այն իրողութիւնից որ,

ա. Ատրպեյճան սկսելով ցեղասպանական նպատակներ ունեցող ռազմական գործողութիւններ՝ բացառել է երկու ժողովուրդների համատեղ կեցութեան որեւէ հնարաւորութիւն,

բ. Ատրպեյճանը մերժում է հակամարտութեան գօտի խաղաղապահ ուժերի մուտքը, իսկ Յայաստանը ընդունում է խաղաղապահներ տեղակայելու հնարաւորութիւնը, բայց չի կարող այն իրականութիւն դարձնել, քանի դեռ չի ճանաչուել Արցախի անկախութիւնը, քանի որ անկայ բանակցային ձեւաչափով պահանջուում է երկու կողմերի համաձայնութիւնը:

Ուրեմն՝ մնում է կատարել ընդամենը մէկ քայլ՝ ճանաչել Արցախի անկախութիւնը եւ դրանով իսկ օրինականացնել իր պաշտպանութեան հարցը Ռուսաստանի, Իրանի կամ որեւէ այլ երկրի հետ լուծելու՝ Արցախի իրաւունքը:

ՊԱՅՔԱՐ ԹՈՎՄԱՍԵԱՆ...


Սկիզբ՝ էջ 5

Իսկ դուն, ո՛վ խաւարամիտ օսմանցի, Պատրանքներդ թաղե՛ ու հեռացի՛ր: Հեռացի՛ր մեր երկրէն, հերիք է ատելութիւն սերմանես, թող վերջնականապէս ցամքին ահաբեկչութեան եւ անարդարութեան աղբիւրներդ: Կ'երդնուք թոյլ չտալ քեզ, որ կրկնես նախնիներուդ գործած ոճիրը եւ այս անգամ ցեղասպանութեան ենթարկես արցախահայութիւնը:

Արցախը անկախ է, հայկական է, մենք այնտեղ պատմութիւն ունինք, մեր կեանքը ծիլ նետած է այնտեղ ու արմատներ հաստատելով ծաղկած ու լուսաւորուած: Արցախի մեր հերոսներն են ահա՛, որոնք վճռած են արդարութիւն հաստատել ու հայրենիքը պաշտպանել՝ իրենց անմեղ արեան գնով: Անոնց սուրբ արիւնը պիտի ոռոգէ Արցախի հողը ու անուշաբոյր վարդեր կրկին պիտի բացուին ու ողջ աշխարհը իրենց բոյրով պարուրեն: Անոնց արեան կանչը նորահաս սերունդներուն յաղթերգութիւնը պիտի ըլլայ: Վճռած ենք, պիտի յաղթենք:

Աշակերտական Էջ

ՆԱՅՈՑ ԲԱՆԱԿԸ



Շողիկ Գաթապեան

Շատ տխրեցայ, երբ դիմատետրիս ամառը հաղորդուած լուրը տեսայ: Դաժան թշնամին՝ Ատրպեյճեանը, Թուրքիոյ օգնութեամբ յարձակում կը կատարէ մեր Արցախին վրայ:

27 Սեպտեմբեր Էր: Վատ օր մը հայութեան համար:

Մտահոգ էի, տարօրինակ զգացում մը կը տիրէր իմ ամբողջ էութեանս: Շարունակեցի կարդալ լուրերը: Վախս ձեռով մը փարատեցաւ: Հայոց բանակը իր ուժեղ զինուորներուն կամքով մեծ դիմադրութիւն կը ցուցաբերէր եւ ետ կը մղէր թշնամին: Հոգիս հպարտութեամբ լեցուեցաւ: Հայ երիտասարդներ, սփիւռքէն եւ հայրենիքէն պատրաստ էին ուս-ուսի մէկ բռնկեց զարձած առիծի պէս կռուելու, անտեսելով մահը: «Մահն իմացեալ անմահութիւն է»:

Մեր ուժին աղբիւրը մեր իրաւունքն է: Արցախը մերն է եւ մենք պիտի պաշտպանենք զայն:

Սփիւռքահայեր իրենց կարելին կ'ընեն օգտակար դառնալու

հայրենիքին, զինուորին եւ բանակին:

Անոնք տարբեր երկիրներու մէջ ցոյցեր կը կազմակերպեն Արցախի միջազգային ճանաչումը ապահովելու եւ թշնամին դատապարտելու համար: Նուիրատուութիւններ կը հաւաքեն եւ կ'ուղարկեն Արցախ:

Ինչպէս ամէն հայ, մենք եւս ամէն օր կ'աղօթենք ձեզի համար, սիրելի զինուորներ:

Յարգանք ձեզ: Վստահ ենք, որ դուք հպարտ ու անպարտ, յաղթանակի դրօշը պարգած պիտի միանաք ձեր հարազատներուն:

Արցախը պիտի մնայ անկախ եւ պիտի միանայ Հայաստանին:

Յանուն կեանքի, խաղաղութեան, հայրենիքի եւ հաւատքի պիտի յաղթենք:

Հայը պարտութիւն չի ճանչնար:

Թ. կարգ

Քեսապի Ազգ. Ուսումնասիրաց Միացեալ Ծննդարան



ՆԱՄԱԿ ՏԱՅ ԶԻՆՈՒՈՐԻՆ



Սերոբ Ղազարեան

Հայոց բանակի հերոս զինուորներ:


Պատերազմ է, դարձեալ թշնամին կը փորձէ Արցախը խլել մեզմէ, բայց դուք հերոսաբար կը կռուիք եւ ձեր կեանքը կը զոհէք հայրենիքի պաշտպանութեան համար: Մենք հեռու ենք ձեզմէ, բայց միշտ ձեր մասին կը մտածենք, ձեր կողքին ենք եւ հպարտ ենք ձեզմով: Վստահ ենք, որ պիտի յաղթենք:

Կ'աղօթենք, որ Աստուած պահէ ձեզի եւ խաղաղութիւն տայ մեր սիրելի հայրենիքին:

Ը. կարգ

Քեսապի Ազգ. Ուսումնասիրաց Միացեալ Ծննդարան

ՆՉՕՐ ԶԻՆՈՒՈՐ



Մեղեդի Մելքոնեան

Մեր շա՛տ սիրելի զինուորներ եւ կամաւորներ, որ կը կռուիք եւ կը պաշտպանէք մեր հայրենիքի սահմանները:

Ես Մեղեդի Մելքոնեանն եմ, Սուրիոյ Քեսապի Ազգային Ուսումնասիրաց Միացեալ Ծննդարանի ութերորդ դասարանէն:

Գիտեմ, ձեր օրերը շատ դժուար կ'անցնին, բայց վստահ եղէք, որ միլիոնաւոր հայեր ձեզի կը զօրակցին եւ աշխարհի չորս կողմէն կ'աղօթեն ձեզի համար: Յաջողութիւն կը մաղթեմ ձեզի ձեր առաքելութեան մէջ եւ յաղթանակ մեր հերոսական բանակին: Աստուած ձեզի պահապան:

Արցախը Հայաստան է:

Ը. կարգ

Քեսապի Ազգ. Ուսումնասիրաց Միացեալ Ծննդարան

ԱՐՑԱԽԸ ՄԵՐՆ Է



Գառնի Անտրեան

«Բոլորս հայ զինուոր ենք», «Արցախը մերն է»: Յաճախ կը լսեմ այս խօսքերը, բայց նոր իմացայ, թէ ինչ կը նշանակեն անոնք:

Թշնամին յարձակում գործած է հայկական հողին՝ Արցախին վրայ: Հայ քաջարի զինուորները կռիւ կը մղեն թշնամիին դէմ ու կը պաշտպանեն հայրենիքի սուրբ հողը: Անդադար կը պայքարին, զիշեր ու ցերեկ, որ մեր սահմանները մնան ապահով:

Աստուած միշտ անոնց հետ թող ըլլայ եւ ուժ տայ իրենց:

Որոշած ենք իւրաքանչիւր դժուարութիւն յաղթահարել միասին, եւ մեր բոլոր ուժով դէմ կանգնի թշնամիին:

Բոլորը պետք է գիտնան, որ հայոց բանակը զօրաւոր եւ ամուր է Արցախի լեռներուն նման:

Ը. կարգ

Քեսապի Ազգ. Ուսումնասիրաց Միացեալ Ծննդարան

ՆԱՄԱԿ ՏԱՅ ԶԻՆՈՒՈՐԻՆ



Նշան Թրթռեան

Բարե՛ւ, իմ սիրելի հա՛յ զինուոր,

ճիշդ է, ես չեմ ճանչնար քեզ, բայց կը գրեմ սրտիս խօսքը:

Գիտեմ որ պայմանները շատ դժուար են, դուք ձեր մայրերն ու հարազատները կը կարօտնաք, բայց գիտեմ նաեւ, որ դուք այնքան քաջ էք ու տոկուն, որ կը յաջողիք մեր սահմանները պաշտպանել:

Կ'ուզեմ, որ բոլոր՝ վերադառնաք տուն առողջ եւ յաղթական, ու շէնցնէք մեր երկիրը:

Կը փափաքեմ ըլլալ ձեզի հետ եւ կռուիլ յանուն հայրենիքի:

Համոզուած եմ որ պիտի յաղթենք, որովհետեւ Աստուած միշտ մեզի հետ է:

Ը. կարգ

Քեսապի Ազգ. Ուսումնասիրաց Միացեալ Ծննդարան

ՓՈՔՐԻԿ ՀԱՅԱՍՏԱՆ (6)

Արմենակ Եղիայեան

Հրաչեայ Քոչար

Ճեմարանի ամօրեան հայրենի շունչով ծաղկեցնելու մէջ իրենց գնահատելի դերակատարութիւնը ունեցած են արեւելահայ հիւրեր եւս, որոնք չէին թերանար մէկ-մէկ հանդիպելու եւ շփուելու ինչպէս ուսուցչական կազմին, այնպէս ալ շապակերտութեան, ընդհուպ անոնց ծնողներուն՝ ողջ հանրութեան հետ: Ժամանակները սկսած էին փոխուիլ, եւ Երեւանի իշխանութիւնները ակներեւ ճիգ կը թափէին սիրաշահելու սփիւռքահայութեան բոլոր շերտերը անխտիր եւ հայաստանը դարձնելու համայն հայութեան հայրենիքը:

Ահա այս ծիրէն ներս էր, որ ամառիկը Լիբանան եկաւ Հրաչեայ Քոչարը՝:

Ան ճեմարան այցելեց եւ արդի հայաստանի թարմ շունչը բերաւ 28 Յունուար 1961-ին, Շաբաթ օր մը, կէսօրէն ամառ, ընկերակցութեամբ



Խորհրդային դեսպանատան հայ կցորդին: Ան այս՝ ան ամառին ծիծեռնակն էր, որ կու գար հայրենիքէն: Իրմով է որ փոխադարձ այցելութիւնները թափ առին ու բազմացան:

Թէկուզ ամառիկը՝ սակայն ան բոլորովին անձանօթ մը չէր, գոնէ անոնց համար, որոնք կը կարողային ժամանակակից մամուլը ու քիչ թէ շատ վերահասու էին հայրենի անցողորմներուն, եւ այս ամուսնով՝ Հրաչեայ Քոչար ուներ բաւական ծանրաբեռն ու ճնշիչ թղթածրար մը:

Ան կ'ամբաստանուէր իբրեւ մէկը այն կծու համայնավարներէն, որոնք շատ սերտ կը գործակցէին հայրենի պատկան սպասարկութեանց հետ՝ մինչեւ իրենց ձեռքը թաթխելով այնպիսի մատնութիւններու ու

գրպարտութիւններու մէջ, որոնք 1936-37 տարիներուն պատճառ դարձան հայ գրողներու ու մտաւորականներու փաղանգի մը բանտարկութեան, գնդակահարութեան կամ քսորին:

Ով՛ ով, սակայն ինք՝ Քոչար, ամբողջական համոզումով ու նուիրումով շարունակեց իր գործունէութիւնը այլապէս եւս, նախ իբրեւ լրագրող միանալով Կարմիր բանակին ու հետեւելով անոր մղած մարտերուն համաշխարհային Բ. պատերազմի բոլոր հիմն տարիներուն, ապա իբրեւ գրող՝ պանծացնելով համայնավարութիւնը եւ անոր հաստատած կարգերն ու «պայծառ ամօրեան» այս գաղափարախօսութեան ցայտուն գրաւականն է իր «Մեծ Տան Չաւակները» ծաւալուն վեպը, որ լոյս տեսաւ պատերազմէն ետք՝ 1952-ին, թարգմանուելով միութենական այլ լեզուներու եւս:

Այդ «տունը» խորհրդային անսահման հայրենիքն է, իսկ «զաւակները»՝ խորհրդային մէկ ու միասնական՝ «եղբայրացած» անանուն ու անդամագիծ ժողովուրդները՝ առանց գոյնի, լեզուի ու կրօնքի խտրութեան:

Սփիւռքը գաղափարական այս պղտոր ծիրէն ու տեսանկիւնէն կը ճանչնար Քոչարը, երբ ան ձեռնարկեց իր անակնկալ ու անսխալընթաց այցելութեան ի Լիբանան:

Այն օրը ճեմարանի բակը լեցուն էր մասնաւորաբար աշակերտներով:

Համակրելի հռետոր, ձայնային ու շարժումային բոլոր հնարքներուն հմտօրէն տիրապետող, այլեւ ջերմ ու համակիչ հայերէնով մը՝ ան մօտաւորապէս ամբողջ մէկ ժամ խանդավառեց ներկաները՝ իր հայրենասիրական, հայեցի անգսպելի յուզումներով ու գեղումներով համակելով իր ունկնդիրները. «Կը հաւատանք, որ մօտիկ ապագայում հայաստանի քաղաքացիներ պիտի դառնանք նաեւ դուք՝ կազմելով մի ժողովուրդը», - նաեւ թելադրելով. «Մի՛ սպասեք, որ հայաստանը ինքնիրեն լայնայն, որպէսզի գայն ընդունիք եւ հոս գաք հաստատուելու»: ու մանաւնդ. «Հիմա մենք միայն հիւսիսից ենք տեսնում Մասիսը, մաղթում ենք որ մի օր նրան տեսնենք նաեւ հարաւից եւ արեւմուտքից»:

Վրացեան, որ այս ամբողջ ժամանակը աներեր կանգնած էր անոր կողքին եւ լաւ կը ճանչնար գայն, եղաւ ամառիկ «շնորհաւորողը»՝ կիրարկելով խայթող սրամտութիւն մը.

-Քոչար, դաշնակցական գործիչի պէտք ունենք, մեր մօտ մնա՛ տստեղ: Բայց իրապէս ամեն բանի տեղեակ էր Վրացեան:

Որովհետեւ պէտք եղաւ, որ տարիներ անցնէին, որպէսզի լոյսին գար այն դրական շրջադարձը, որ իր քաղաքական ու գաղափարական ըմբռնումներուն մէջ ունեցած էր երբեմնի «Մեծ տան» այս հաւատարիմ գաւակը՝ հետզհետէ ամփոփուելու ու կեդրոնանալու համար իր հարագատ «Փոքր տան» վրայ:

Եւ այս՝ առանց անպայման խզուելու համայնավար կուսակցութենէն

եւ որոճալով գնահատան ազգօգուտ ծրագրեր:

Այսպէս՝

1) Ան կը դիմէ օրուան իշխանաւորներուն՝ պահանջելով.

ա) հաստատել հայաստանի արտաքին նախարարութիւն մը,

բ) խորհրդային դեսպանատուներու կից հիմնել հայկական հիւպատոսարաններ,

գ) հրատարակել Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան 40 օրերը» եւ Շանթի գործերը,

դ) Սարդարապատի մէջ հիմնել յուշահամալիր մը թանգարանով հանդերձ,

ե) վերականգնել գօր. Անդրանիկի անունը,

զ) վերադարձնել Լազարեան ճեմարանը:

2) Չի վարանիր այս բոլորը կրկնելու Անաստաս Միկոյեանին, որ... կ'ընդունի գանոնք ամանց ամարկութեան, եւ ինչպէս գիտենք անոնց մեծ մասը բարուք լուծում կը ստանայ:

Կու գայ պահ մը, ուր Քոչարի կ'ամառաբարկութիւն ստանձնել մինչեւ անգամ Գերագոյն Խորհուրդի նախագահութիւնը, որ ան կը մերժէ:

Եղեռնի յիսնամեակին ընդամենը ան կ'որոճայ այլ ծրագրեր:

3) 1963-ի վերջերուն, սփիւռքահայութեան ուղղուած մէկ խօսքին մէջ, կը խոստանայ բարձրացնել պատշաճ յուշարձան մը Եղեռնի գոհերուն: Իսկ 1964-ին ամ այդ կը դիմէ օրուան իշխանութեան նման կողորդի մը կառուցումի թելադրանքով: Ան մինչեւ անգամ կը նկարագրէ գայն՝ իբրեւ երկինք խոյացող բարձր սիւն մը, որ պիտի օժտուած ըլլար մշտական կրակով:

Չարմանալի չէ՞, որ ճիշդ այդպէս ալ կերտուեցաւ Եղեռնի յուշարձանը:

4) Կ'ամառաբարկէ կենդանութիւն՝ մեծ շուքով նշել Եղեռնի յիսնամեակը:

Այս երկու ամառաբարկներով կը դիմէ մինչեւ անգամ Պրեժնեւիչի ու Քոսիկինի:

Եւ մինչ կը պատրաստուէր անձամբ մասնակցիլ Յիսնամեակի հրապարակային ձեռնարկին՝ 24 Ապրիլի 1965-ին, այդ նոյն օրը սրտի տագնապով կ'իյնայ անկողին:

Այդ ցոյցը, ինչպէս գիտենք, խաղաղ չանցաւ. անվարժ ցուցարարները գործեցին ապիկար չափազանցութիւններ՝ մղելով ոստիկանութիւնը, որ միջամտէ ու կատարէ ձեռքարկութիւններ: Եւ Քոչար անշուշտ կ'իմանայ այդ բոլորը:

Ութ օր ետք՝ 2 Մայիսին, անոր ամանծնատուները կ'այցելէ Նագուշ Զարուբիսեանը՝ Գերագոյն Խորհուրդի նախագահը, որուն կը յայտնէ իր գայրոյթը՝ պետութեան ցուցարարներուն հանդէպ ցուցաբերած անհամաչափ վերաբերումին անչլութեամբ...

Եւ այդ կ'ըլլայ իր վերջին «Ելոյթը»ը նոյն օրուան վերահաս մահէն առաջ՝ 55 տարեկանին:

Այդ նոյն տարին լոյս կը տեսնէ Քոչարի վերջին աշխատութիւնը, որ եռագրութիւն մըն է եւ կը կոչուի «Սպիտակ Գիրքը», որ կը բովանդակէ երեք գողտրիկ վիպակներ՝ «Նահապետ»ը, «Կարօտ»ը եւ «Եփրատի Ափին»ը:

Քոչարի ստուար գրականութեան մէջ ասոնք այնպիսի ստեղծագործութիւններ են, որոնք բացարձակապէս ոչ մէկ անչլութիւն ունին «Մեծ տան» գաւակներուն, Խորհրդային Միութեան ու համայնավար գաղափարախօսութեան, այլ խօսքով՝ իր «հին աստուածներուն» հետ: Բոլորն ալ կ'անչլուն մեր փոքր ածուին՝ հայ գիւղացի ամօրեային, հայրենակորոյս պանդուխտին ու անոր խանձող կարօտին եւ այն «փոքր տունիկ», որ ան ձգած է Արաքսէն այն կողմ ու գաղթական եկած է Արեւելահայաստան:

Ահա Առաքելը, որ կ'ապրի Արագի ափին, սակայն անոր աչքերն ու հոգին միշտ ուղղուած են գետի միւս կողմը լքուած տունն ու հողը. «Հիմա երկիրը հեռու էր ու անհասանելի, եւ Առաքելը նայում էր՝ առաւօտ, երեկոյ, գիշեր եւ ցերեկ... Մասիսները կանգնում էին Արագի էն ափին, Առաքելի աչքերի մէջ: Թէ սիրտ ունիս՝ դիմացի՛ր: Ուրիշները, օրուայ աշխատանքից յոգնած, դադարած, քնում էին խորը քնով, իսկ Առաքելը քնել էր կարողանում. «Իմ սիրտ կը ցաւէ... երկիր ինձի կը կանչէ...» («Կարօտ»):

Ահա այս կանչին ալ չդիմանալով՝ օր մը ան կը հատէ Խորհրդային պետական սահմանը, կ'անցնի Արաքսը ու կը հասնի իր ծննդավայրը, իր տնակը ու կը համբուրէ անոր աներակ քարերը: Քակի մը շաբաթ այնտեղերը թափարելէ, մարգերու թարմ խաւարծիլը ճաշակելէ, աղբիւրներու ջուրը խմելէ, քիւրտ ծանօթներու հետ հաց ուտելէ ու կարօտը մեղմելէ ետք կը դառնայ հակառակ ուղղութեամբ ու կը միանայ իր հարագատներուն:

Այս էր Քոչարի վերջին կտակը, վերջին պատգամը, վերջին աւանդը:

Սակայն հակառակ այս բոլորին՝ ան չյաջողեցաւ յաջաւորութեան վերականգնել իր վարկը, մոռցնել միւս Քոչարը, որուն խարանը շարունակեց մնալ ճակատին:

2017-ին ձեռնարկի մը առթիւ գտնուեցայ Գրողներու տունը, որուն պատերը կը գարդարէին մեր հին ու նոր գրեթէ բոլոր գրողներու պատկերները:

Կը բացակայէին երկուքը՝ Նայիրի Չարեանինը եւ Հրաչեայ Քոչարինը:

1-Ան Լիբանան մնաց 18 օր, իջեւանեցաւ Federal պանդոկը: Ընդամենը անխտիր բոլոր հրաւերներուն՝ առանց հրեայի ու հեթանոսի որեւէ խտրութեան, շրջեցաւ Լիբանանի բոլոր հայաշատ օճախները եւ ունեցաւ 40 էլոյթ:

ՀԱՒԱՆԱԿԱՆ Է, ՈՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԶԳԵՍՏՈՎ ԱՏՐՊԷՅՃԱՆՑԻ ԶԻՆՈՒՐՆԵՐՈՒ ՎՐԱՅ ՎՐԱԿԱԾ ԵՆ ԻՐԵՆՑ ԻՍԿ ԶՕՐՔԵՐՈՆ



Յարույթ Սամսունյան

25 Հոկտեմբեր 2020-ին Միացեալ Նահանգներու պետական քարտուղարութիւնը մեծ խանդավառութեամբ յայտարարեց Արցախի պատերազմի մէջ վերջին քանի մը շաբթուան ընթացքին հրադադարի երրորդ փորձի մասին: Առաջին երկու հրադադարները խախտուած էին Ատրպէյճանի եւ Թուրքիոյ կողմէ՝ ուժի մէջ մտնելէ քանի մը վայրկեաններ ետք: Նոր հրադադարի մասին յայտարարութիւն կատարուեցաւ այն բանէն ետք, երբ Հայաստանի եւ Ատրպէյճանի արտաքին գործոց նախարարները հասան Ուաշինկթըն եւ առանձին հանդիպումներ ունեցան պետական քարտուղար Մայք Փոմփեյի հետ, 23 Հոկտեմբեր 2020-ին:

Այս վերջին «մարդասիրական հրադադարը» ուժի մէջ մտաւ 26 Հոկտեմբերին, տեղական ժամանակով առաւօտեան ժամը 8:00-ին: Ցաւօք, երրորդ հրադադարը եւս խախտեցաւ Ատրպէյճանի եւ Թուրքիոյ կողմէ քանի մը վայրկեան անց: Ասիկա կը վկայէ այն մասին, որ Ատրպէյճան, Թուրքիա եւ Սուրիայէն ժամանած ճիհատիսթական - վարձկաններ մտադրութիւն չունին դադարեցնելու պատերազմը, քանի որ դեռ Արցախը չեն մաքրած տեղի հայ բնակչութենէն, բան մը, որ բազմաթիւ անգամներ յայտարարած է Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւ: Հայաստան եւ Արցախ, երեք միլիոն քիչ մը անելի բնակչութեամբ, կը պայքարին անելի քան 90 միլիոն բնակչութիւն ունեցող Ատրպէյճանի եւ Թուրքիոյ միացեալ ուժերու դէմ: Ասիկա Դաւիթի պայքարն է Գողիաթի դէմ: Ասիկա նաեւ կը նշանակէ, որ ատրպէյճանական հզօր բանակը, մինչեւ ակօսանքը գիտուած Իսրայէլէն եւ Ռուսիայէն միլիոնաւոր տղարներու ժամանակակից գէներով, չի կրնար իր մարտերը մղել՝ առանց յենելու թուրք գիտնորականներու եւ իսլամիստ վարձկաններու վրայ: Նոյնիսկ իրենց միացեալ ուժերով՝ Ատրպէյճան եւ Թուրքիա մէկ ամիս տեւած մարտերէ ետք անկարող են նուաճելու Արցախը...

Վերջին շաբթներու ընթացքին Նեւատայի, Օհայոյի եւ Նիւ Հեմփշիրի մէջ կայացած նախընտրական հանրահաւաքներուն նախագահ Թրամի իր ելոյթներուն ընթացքին երեք անգամ յիշատակած է հայերը: Ան հաճոյախօսութիւններ ըրած է հայերու մասին, սակայն բառերը անիմաստ են, այնքան ատեն որ անոնց չեն հետեւիր գործողութիւնները: Թրամփին կը մնայ միայն վերցնել հեռախօսը, հեռաձայնել իր ընկերոջը՝ Էրտողանին, եւ ըսել, որ դադարեցնէ աշակցութիւնը Ատրպէյճանի եւ յետոս կոչէ իր հաւաքագրած եւ Ատրպէյճան տեղափոխած ահաբեկիչները: Փոխարէնը, Թրամփ ըրաւ այն, ինչ որ ձեռնտու է իրեն՝ առաջին հերթին 3 Նոյեմբերին վերընտրուելու նպատակով դիմելով ամերիկահայ ընտրողներուն:

Ռազմական գործողութիւններէ բացի, կան նաեւ այլ ճակատներ, ուր հայերն ու ատրպէյճանցիները կը պայքարին միմեանց դէմ: Միացեալ Նահանգներու մէջ քանի մը բանաձեւեր ներկայացուած են ներկայացուցիչներու Պալատ եւ Տերակոյտ՝ ճանչնալու Արցախի անկախութիւնը եւ արգիլելու զէնքի վաճառքը Ատրպէյճանի եւ Թուրքիոյ: Նման քայլերու ձեռնարկուած են Քանատայի, Ֆրանսայի եւ Աւստրալիոյ հայ համայնքներու կողմէ: Հայկական համայնքները նաեւ զանգուածային բողոքի ցոյցեր կազմակերպած են Միացեալ Նահանգներու, Քանատայի, Աւստրալիոյ, Մերձաւոր Արեւելքի եւ Եւրոպայի քաղաքներու մէջ:

Ամերիկահայերը եւ ընտրուած պաշտօնեաները ճնշում գործադրած են լուսինական

տարբեր ընկերութիւններու վրայ, որոնք վարձուած են Ատրպէյճանի եւ Թուրքիոյ կողմէ՝ որպէսզի դադարեցնեն իրենց քարոզչական ջանքերը: Անցեալ Շաբաթ Մերքիւրի հանրային ռազմավարութեան ընկերութիւնը (Mercury Public Affairs) յայտարարեց, որ դադարեցուցած է լուսինական պայմանագիրը Թուրքիոյ հետ: «Մերքիւրի» Թուրքիան կը ներկայացնէ 2013 թուականէն ի վեր: Այս տարուան Փետրուարին «Մերքիւրի» կընքած է մէկ միլիոն տոլարի պայմանագիր՝ Թուրքիոյ դեսպանատունը ներկայացնելու համար: Լոս Անճելըսի քաղաքային խորհուրդը «Մերքիւրի»-ն յորդորած էր՝ դադարեցնելու պայմանագիրը Թուրքիոյ հետ, այլապէս այլեւս գործ պիտի չունենայ ընկերութեան հետ: Այսպիսի յայտարարութեամբ մը հանդէս եկաւ Լոս Անճելըսի համայնքային համալսարանի շրջանը:

Լուսինական ուրիշ մեծ ընկերութիւն մը՝ DLA Piper, տեղեկացուց Միացեալ Նահանգներու արդարադատութեան նախարարութիւնը, որ այլեւս չի ներկայացնէր Ատրպէյճանի երկաթուղիները: 13 Հոկտեմբերին Livingston Group վերջ տուաւ Ատրպէյճանի համար իր լուսինական գործունեութեան: BGR լուսինական ընկերութիւնը հրաժարեցաւ Ատրպէյճանի SOCAR պետական քարիւղի ընկերութիւնը ներկայացնելէ, կը յայտնէ AHVAL News:

Միւս կողմէ, Հայաստան երբեք չէ վարձած լուսինական կամ հասարակայնութեան հետ կապերու ընկերութիւններ: Հազուադէպ օրինակ էր, երբ ՀՀ կառավարութիւնը լուսինական պայմանագիր կընքէր Alston & Bird իրաւաբանական ընկերութեան հետ (կապուած նախկին ծերակուտական Պապ Տոյի հետ), տասը հազար տոլարով՝ 15 Սեպտեմբեր 2020-էն մինչեւ 14 Հոկտեմբեր: Յայտնի չէ, թէ արդեօք այդ պայմանագիրը երկարաձգուած է, կամ ոչ: Թէեւ լուսինական կամ հասարակայնութեան հետ կապերու ընկերութիւններ վարձելը միշտ ալ օգտակար է, սակայն հայ համայնքը այնքան ալ կախուած չէ այդ հարցէն, քանի որ անոնք քաղաքականապէս աշխուժ են կ'ապաւինի Ուաշինկթընի իրենց սեփական կազմակերպութիւններուն, ինչպիսիք են Ամերիկայի Հայկական Համագումարը եւ Ամերիկայի Հայ Դատի Յանձնախումբը: Միւս կողմէ, Ատրպէյճան եւ Թուրքիա պարտաւոր են միլիոնաւոր տոլարներ ծախսել լուսինական գործունեութեան համար՝ փորձելով իրենց աղտոտ լուսնը ներկայացնել իրեն մաքուր:

Ապատեղեկատուական պատերազմի մէկ այլ կողմն է տարբեր երկիրներու թերթերու էջերուն եւ ընկերային ցանցերու մէջ մղուող պայքարը: Ատրպէյճանի կառավարութիւնը ամեն տարի ամբողջ հարստութիւն մը կը ծախսէ՝ գրողներ վարձելու համար՝ Հայաստանը սեղնելու եւ Ատրպէյճանի բռնապետութիւնը փառաբանելու համար: Մէկ այլ ճակատ՝ ընկերային ցանցերն են: Ամեն անգամ, երբ որեւէ յայտնի ամերիկացի կամ եւրոպացի կը յայտարարէ իր հանրային դիրքորոշումը յօգուտ Հայաստանի, ատրպէյճանցիներու եւ անոնց

վճարովի գործակալներու հորդան կը հետապնդէ այդ մարդիկը եւ զանոնք կը ստիպէ հրաժարիլ իրենց յայտարարութիւններէն:

Վերջին օրերուն քանի մը հաղորդում եղաւ այն մասին, որ ատրպէյճանական զօրքերը կը կրեն հայ գիտնորներու համազգեստներ, ըստ ամենայնի, կռուի դաշտի վրայ շփոթ ստեղծելու համար: Նման կռիւներէն մէկուն մէջ յայտնաբերուած էին հայկական համազգեստով 40 ատրպէյճանցի գիտնորներու մարմիններ: Իմ կարծիքով, այսպիսի գործողութիւն, հայերը շփոթեցնելու փոխարէն, կը յանգեցնէ անոր, որ ատրպէյճանցիները կը կրակեն իրենց գիտնորներուն վրայ՝ զանոնք համարելով հայեր:

Հայաստանի կառավարութիւնը պէտք է բողոք ներկայացնէ Միջազգային քրեական դատարան (ՄԶԴ)՝ ատրպէյճանցի գիտնորներու բարբարոսական վարքագիծին վերաբերեալ: Տեսանլիթի մը մէջ ատրպէյճանցի գիտնորները կը գնդակահարեն երկու հայ ռազմագէտներ: Միւսին մէջ, ատրպէյճանցի գիտնորները կը կտրեն գոհուած հայ գիտնորին գլուխը: Երրորդ



սարսափելի տեսանլիթի մը մէջ կ'երեւի, թէ ինչպէ՛ս ատրպէյճանցի գիտնորները մորթագործ կ'ընեն հայ գիտնորը ողջ վիճակի մէջ: Ասոնք պատերազմական յանցագործութիւններու բացայայտ դէպքեր են: Ատրպէյճան պէտք է դատապարտուի ՄԶԴ-ի կողմէ եւ պատասխանատուութիւն կրէ այդ անմարդկային գործողութիւններու համար: Աւելին, Ատրպէյճան կ'օգտագործէ «քասեթային» ռուսներ, որոնք արգիլուած են միջազգային մարդասիրական օրէնսդրութեամբ: Աւելին, Ատրպէյճան ամէն օր հազարաւոր հրթիռներ կ'արձակէ Արցախի քաղաքներու եւ գիւղերու խաղաղ բնակչութեան ուղղութեամբ: Ատրպէյճան ոչնչացուցած է նաեւ հայերու հարիւրաւոր տուններ, դպրոցներ եւ եկեղեցիներ: Ասոնք բացայայտ յանցագործութիւններ են: Ատրպէյճան պէտք է շատ սուղ վճարէ իր բարբարոսական վերաբերումին համար:

Դրականը այն է, որ առաջին անգամ ըլլալով ամբողջ աշխարհի տասը միլիոն հայերը միացած են: Իւրաքանչիւր հայ կը գիտակցի, որ ասիկա գոյապայքար է: Թուրքիա եւ Ատրպէյճան մտադիր են երկրորդ ցեղասպանութիւն իրականացնել հայերու դէմ: Մինչեւ օրս հայերը հանգանակած են աննախադէպ գումար՝ 150 միլիոն տոլար եւ միլիոնաւոր տոլարներու մարդասիրական օգնութիւն: Միակ բանը, որ կը պակսի՝ ո՛րեւէ միլիոնատեր հայու կողմէ մէկ միլիոն տոլարի նուիրատուութիւնն է՝ Հայաստանի եւ Արցախի գոյատեւման աշակցելու համար: Ի վերջոյ, Հայաստանի անվտանգութեան ապահովման համար անհրաժեշտ է օրական 30 միլիոն տոլար:

**Արեւելահայերէնի թարգմանեց՝
Ռուզաննա Աւագեան
Արեւմտահայերէնի վերածեց՝
Սեդա Գրիգորեան**

Մարզական



Ռաֆֆի Սիկահեան

ՏԵՂԱԿԱՆ

Լուրեր Սուրիոյ Մարզական Կեանքէն

- Շաբաթ օր Դամասկոս ժամանեց Սուրիոյ պասքետթի հաւաքականի ամերիկացի մարզիչ՝ Ճոզէֆ Սալթրոնը, իր հետ ունենալով օգնական մարզիչն ու ամերիկացի արհեստավարժ խաղացողը: Նորանշանակ մարզիչը Տամա Ռոզ հիւրանոցին մէջ ծանօթացաւ խաղացողներուն հետ, որմէ ետք տեղի ունեցաւ մամլոյ ասուլիս մը, ուր ներկայացուեցաւ մարզիչը: Կիրակի առաւօտ Նախքան հաւաքականին Ռուսիա մեկնիլը Սալթրոնը ստորագրեց մէկ տարուան պայմանագիր:



- Սուրիոյ ֆութպոլի ախոյեանութեան առաջին հանգրուանի մրցումներուն, Զալէպի Իթթիհատը 2-1 արդիւնքով պարտութեան մատուցաւ Դամասկոսի Ճէշէն, ինչպէս նաեւ Զալէպի երկրորդ ներկայացուցիչ Զուրիէն 1-0 արդիւնքով զիջեցաւ Ռահտէին: Լաթաքիոյ զոյգ խումբերուն՝ Թիշրիսի եւ Զըթթիսի միջեւ կայացած հանդիպումը աւարտեցաւ 1-0 արդիւնքով ի նպաստ Թիշրիսին: Նոյն արդիւնքով Զարամէն պարտութեան մատուցեց Բ. դասակարգէն բարձրացած Զուճուլէին, իսկ ճապլէ Թալիհաա խումբերուն հանդիպումը աւարտեցաւ 3-3 հաւասարութեամբ:

ՀԱՅԿԱԿԱՆ

Ռաֆայէլ Նազարեան Նշանակուեցաւ Զայաստանի Մ-21 Տարեկանի Մարզիչ

Զայաստանի ֆութպոլի մինչեւ 21 տարեկանի հաւաքականի գլխավոր մարզիչ նշանակուեցաւ Ռաֆայէլ Նազարեանը: Այդ մասին յայտարարեց Զայաստանի ֆութպոլի Դաշնութեան մամուլի ծառայութիւնը: Կիրակի օր Զայաստանի ֆութպոլի Ֆետերասիոնի շէնքին մէջ կայացաւ հանդիպում մը ԶՖՖ Նախագահ Արմէն Մելիքեկեանի՝ Ռաֆայէլ Նազարեանի միջեւ, որմէ ետք կողմերը ստորագրեցին համագործակցութեան երկամեայ պայմանագիր:



Ռաֆայէլ Նազարեանը ունի Զայաստանի Մ-21 հաւաքականի հետ աշխատելու փորձ: Իր գլխավորութեամբ Զայաստանի Մ-21 հաւաքականը 2011-էն 2013 թուական կատարած է 12 հանդիպում, արձանագրած է 5 յաղթանակ, 3 հաւասարութիւն եւ 4 պարտութիւն:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

Սպանիոյ Զլասիքոն Աւարտեցաւ Ի Նպաստ Ռեալ Մատրիտին

Շաբաթ երեկոյեան Զամբ Նոյի մարզադաշտին վրայ մայրաքաղաքի Ռեալ Մատրիտը 3-1 արդիւնքով պարտութեան մատուցեց Զաթալոնիոյ Պարսելոնային: Զանդիպումի երրորդ վայրկեանին Վալվերտին կատարեց

թագաւորական ակումբին կոլերուն բացումը որմէ չորս վայրկեան ետք Ֆաթին նշանակեց հաւասարութեան կոլը: Չոյգ խումբերուն միջեւ հանդիպումը ընթացաւ հաւասար խաղարկութեամբ: Երկրորդ կիսախաղին Ռեալ տիրապետեց խաղարկութեան եւ կրցաւ վտանգի ենթարկել մրցակիցին դարպասը: Ռեալի խմբապետ Ռամոն տուզանային հարուածով կրկնապատկեց արդիւնքը: Նախքան իրաւարարին աւարտի սուլիչը Մոտրիչ եզրափակեց մայրաքաղաքի կոլերուն շարքը:




Ռոնալտինոն վարակուած է Պսակածէ Ժահրով

Միլանի եւ Պարսելոնայի Նախկին արագիցի խաղացող Ռոնալտինոն դիմատետրի իր էջին մէջ յայտարարեց թէ ան վարակուած է պսակածէ Ժահրով, եւ ներկայիս ան կ'անցընէ իր մեկուսացման շրջանը: Ռոնալտինոն տեսերիզի մը միջոցաւ ներկայացաւ իր ընկերներուն ու յայտարարեց իր հիւանդութիւնը: Ան վերջերս իր մասնակցութիւնը բերած էր ծանուցումի մը ներկայացման: Ան յիշեց թէ առողջապահական վիճակը վտանգաւոր չէ, բայց կարիք ունի մեկուսացման ժամանակաշրջանի: Նշեց թէ Մարտ ամսուան ընթացքին Ռոնալտինոն ձերբակալուեցաւ Փարակուէի կառավարութեան կողմէ եւ ազատ արձակուեցաւ Օգոստոսին:




Թիւ 29

Աւարտէ խաղը մէկ քայլով «ճերմակ քար»:



Նախորդ Թիւի Պատասխանն է f 5 #

ՀԱՄԱՐՈՒՄԻ ճատրակի Յնձիւ.



ՀԱԼԵՊԱՆԱՅՈՒԹԻՒՆ...

Մկրտչի 1

Քրիստափոր Ուսանողական Միութեան, Հայ Դատի Յանձնախումբի, Սուրիոյ Երիտասարդական Միութեան, Սուրիոյ Պատանեկան Միութեան, անդամներ, ՀԱԼՄ-ի սկսուտական խումբերն ու փողերախումբը Սուրիոյ, Հայաստանի եւ Արցախի դրօշները պարզած եւ թրքական եւ ատրպէյճանական ահաբեկչական արարքները դատապարտող խօսքերով խաւաքարտեր բարձրացուցած ՀԱԼՄ-ի դաշտէն քայլարշաւով ուղղուեցան Ազիզիէի հրապարակ, ուր իրենց կը սպասէր հոծ բազմութիւն մը:



Արաբերէն բացման խօսքով Բերիոյ Թեմի Ազգ. Վարչութեան անդամ, փաստաբան Պայքար Թովմասեան խստորէն դատապարտելով Թուրքիոյ պատերազմամետ քաղաքականութիւնը ըսաւ. «Տարիները կ'անցնին, ժամանակները կը փոխուին սակայն պատմութիւնը կը կրկնէ ինքզինքը: Ահա նոյն արիւննարբու օսմանցին կրկին արիւն կը հեղէ եւ ժողովուրդներու ազատութիւնը կը կաշկանդէ՝ յագեցնելու համար իր օսմանական



պատրանքներն ու տենչերը: Ան Սուրիոյ, Լիպիոյ, Իրաքի եւ Յունաստանի մէջ պատերազմներ կը հրահրէ կամ իր վարձկաններն ու գէղքերը կ'ուղարկէ Արցախ սպանելու խաղաղ ժողովուրդը, բայց մենք՝ հայերս թոյլ պիտի չտանք, որ մեր ժողովուրդը անգամ մը եւս ցեղասպանութեան ենթարկուի»: Հայերէն բացման խօսքով Հալէպի Նահանգային Խորհուրդի անդամ, փաստաբան Մարիա Գաբրիէլեան անդրադարձաւ Թուրքիոյ եւ Ատրպէյճանի պատերազմական յանցագործութիւններուն եւ



դատարպատեց միջազգային ընտանիքը իր անտարբերութեան համար, ապա եզրափակելով խօսքը ըսաւ. «Ինքզինք յառաջադէմ համարող աշխարհի մեծ տիրութիւնները կը շարունակեն կոյր ու խուլ ձեւանալ Թուրքիոյ գործած ոճիրներուն ի տես, անոնք խցաններով փակած են իրենց ականջները եւ ականակապիճները անարդարութեան շողով ծեփած: Պիտի հասկնաք, միջազգային ընտանիք, Երոպայ՝ Ամերիկաներ եւ Արաբական Աշխարհ, մեր համբերանքն ալ պարագիծ ունի, հայրենիքի մեր կարօտի կրակը հրդեհի վերածուելու ժամը չ'ուշանար: Այնպէս ինչպէս պաշտպանեցինք սուրիական հայրենիքը նոյն թշնամիին դէմ, պիտի պաշտպանենք Արցախ հայրենիքը»:

Այնուհետեւ բեմավար Աննա Պարսամեան յաջորդաբար հրաւիրեց Սուրիոյ խորհրդարանի երեսփոխան Ժիրայր Ռէսսեանը, Սուրիոյ Ազգային Հասարակական Կուսակցութեան ներկայացուցիչը, Սուրիական Աղեքսանտրէի Միութեան ներկայացուցիչը, Սուրիոյ Արաբական Անկերվարական Կուսակցութեան ներկայացուցիչը, Սուրիոյ Ազգային

պահակագունդի ներկայացուցիչը, Պաղեստինցի ժողովուրդի, Արաբ Աւետարանական համայնքի ներկայացուցիչները, իսլամ կրօնաւոր Շէյխ Ճամալ Համմաշը ներկայացնելու իրենց խօսքերը:

Անոնք նախ շեշտեցին, որ հայ եւ արաբ ժողովուրդները եղբայր



ժողովուրդներ են, որոնք դարեր շարունակ պայքարած են իրենց իրաւունքներուն համար: Ապա շեշտեցին, որ Արցախի դէմ պատերազմին մասնակցութեան Թուրքիոյ նպատակը Հայաստան հասնիլն է: Թրքական բարբարոսութիւնը կ'արտայայտուի Էրտողանի օսմանական նկրտումներով, ան պատերազմներ կը հրահրէ եւ վարձկան ահաբեկիչներ կը փոխադրէ տարածաշրջանէ տարածաշրջան: Խօսք ամսողները ակնուցին նաեւ, որ պէտք էր դատապարտել առաջին համաշխարհային պատերազմի ընթացքին Օսմանեան Թուրքիոյ իրագործած Հայոց Ցեղասպանութիւնը եւ հայերուն բռնի տեղահանութիւնը իրենց պատմական հայրենիքէն: Թուրքերը ամօթի խարան մըն են՝ նետուած պատմութեան էջերուն մէջ:

«Կ'ողջունենք Արցախի բանակը, յաղթանակ կը մաղթենք անոր, կը զօրակցինք ազատատենչ հայ ժողովուրդին, որմէ երկու հոգի, երբ



հանդիպին աշխարհի որեւէ մէկ ծայր, կը ստեղծեն նոր Հայաստան: Մենք Սուրիոյ մէջ, մեր հայ եղբայրներուն հետ կ'ապրինք համերաշխութեան ու փոխադարձ յարգանքի մթնոլորտի մէջ: Սուրիահայութիւնը անբաժան մէկ մասնիկն է սուրիական ընկերութեան», առաւելաբար շեշտեցին խօսք անողները:

Օրուան երգափակիչ պատգամը ուղղեց Բերիոյ հայոց Թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տ. Մասիս Սրբ. Եպս. Զօպուեան, որ ըսաւ. «Ապրի՛ք հալէպահայեր, տակաւին հոս ենք եւ հոս պիտի մնանք, Հալէպէն պիտի պաշտպանենք մեր Սուրիական Հայրենիքը, անոր ամբողջականութիւնը եւ Մայր Հայաստանն ու Արցախը մեր բոլոր կարելիութիւնները ի սպաս դնելով այս ուխտին»:

Աւելի քան 3000 հալէպահայեր, համայնքապետներ, պետական, կրօնական, կուսակցական ներկայացուցիչներ շեշտեցին Արցախի հայութեան արդար պայքարին իրենց զօրակցութիւնը:



Հաւաքին արաբերէն եւ հայերէն հայրենասիրական երգերով իր մասնակցութիւնը բերաւ Մարիա Չիչեան, անոր միացան նաեւ հարիւրաւոր երիտասարդներ եւ իրենց անվերապահ զօրակցութիւնը յայտնեցին Արցախի մեր հերոսներուն:

Հաւաքը, որ աննախընթաց էր իր տեսակին մէջ որպէս քաղաքական արթ, վերջ գտաւ Հայաստանի Հանրապետութեան քայլերգով: